

## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԵՆ

### Հարուած Սը Եւս Ամերիկայի Հեղինակութեան

Անցեալ շաբաթ ՄԱԿ-ի Ընդհանուր Ժողովը ձայներու հսկայ տարբերութեամբ մերժեց Միացեալ Նահանգներու նախագահ Տոնալտ Թրամփի որոշումը՝ Երուսաղէմը որպէս Իսրայէլի Մայրաքաղաք ճանչնալու կապակցութեամբ: 129 երկիրներ քուէարկեցին Ամերիկայի դէմ եւ միայն 9 փոքր երկիրներ Ամերիկայի հետ:

Տոնալտ Թրամփի Միացեալ Նահանգներու դեսպանատունը թել Ալիւն Երուսաղէմ փոխադրելու իր որոշումով եկաւ խախտելու 70 տարուայ Ամերիկեան արտաքին քաղաքականութեան սկզբունքներէն մէկը՝ քաղաքի վերջնական կարգավիճակի ճշդումը Իսրայէլի եւ Պաղեստինցիներու միջեւ ընթացող բանակցութիւններուն ձգելու վերաբերեալ: Թրամփի անտեսելով ներքին ու արտաքին բազմաթիւ զգուշացումները, անգամ մը եւս դիմեց անհեռատես քայլի:

ՄԱԿ-էն ներս տեղի ունենալիք քուէարկութենէն առաջ Թրամփի կատարած սպառնալիքները՝ Ամերիկայի դէմ քուէարկող երկիրներուն միւթական օժանդակութենէն զրկելու գծով, անտեսուեցան հարիւրեւեակ երկիրներու կողմէ:

Թրամփի որոշումին դէմ կողմնորոշուեցան Ֆրանսան, Անգլիան, Գերմանիան, Ռուսաստանը, Չինաստանը եւ Եւրոպական գրեթէ բոլոր պետութիւնները: Ծիշող որոշում կայացուց նաեւ Հայաստանը, որու արտաքին գործոց նախարարութիւնը եկաւ յայտարարելու որ, Երուսաղէմի կարգավիճակի հարցը միջազգային օրակարգի կարեւորագոյն հարցերէն մէկն է եւ կրնայ լուծուի ստանալ միայն բանակցութիւններու միջոցով:

Նախագահ Թրամփի միջազգային թատերաբեմին վրայ իր առած քայլերով կու գայ հաստատելու թէ, զուրկ է արտաքին քաղաքականութեան վերաբերող բարոյ հարցերը ճիշդ վերլուծելու եւ համապատասխան որոշումներ կայացնելու կարողութենէն:

Ինչ կը վերաբերի Թրամփի որոշումներուն չենթարկուող երկիրները Ամերիկեան օժանդակութենէն զրկելու մասին սպառնալիքին, հոս եւս ան կը սխալի: Այլ երկիրներուն յատկացուող նպաստներուն շնորհիւ Միացեալ Նահանգները իր ազդեցութիւնը կը տարածէ այդ երկիրներէն ներս ու ձեռք կը ձգէ ռազմական, քաղաքական եւ տնտեսական շատ անառաւելութիւններ՝ որոնք անհրաժեշտ են միջազգային գետնի վրայ Ամերիկայի ազդեցութեան գոտիներու ընդլայնման գծով:

Այսպիսով ՄԱԿ-ի որոշումը ապտակ մըն էր աւ Թրամփին ու նաեւ հարուած՝ Ամերիկայի միջազգային հեղինակութեան:

«ՄԱՍԻՍ»

### Սերժ Սարգսեան Թիֆլիսի Սէջ Հանդիպած է Կրաստանի Դեկավարներուն Հետ



Սերժ Սարգսեան եւ Գիորգի Մարգվելաշւիլի Թիֆլիսի մէջ կայացած միատեղ մամուլի ասուլիսի ընթացքին

**Դեկտեմբեր 25-ին նախագահ Սերժ Սարգսեան պաշտօնական այցով ժամանեց Թիֆլիս:** Հայաստանի եւ Վրաստանի նախագահները Թիֆլիսի մէջ կայացած հանդիպման ընթացքին անդրադարձած են երկու երկիրներու միջեւ ընդլայնուող առևտրատնտեսական օրակարգին՝ առաջին հերթին կարեւորելով ընթացիկ համագործակցութեան այնպիսի նշանակալի ոլորտներ, ինչպիսիք են ուժանիւթն ու փոխադրութիւնը: Հանդիպումէն ետք լրագրողներու հետ հանդիպման ժամանակ այս մասին ըսած է նախագահ Սերժ Սարգսեանը:

«Անդրադարձել ենք մեր երկրների տարանցիկ կարողութիւնների եւ դրանց արդիւնաւէտ օգտագործման հնարաւորութիւններին

զարգացմանը: Խօսեցինք զբօսաշրջութեան, տեղեկատուական տեխնոլոգիաների ոլորտում նախանշուած ծրագրերի իրականացման մասին՝ հաշուի առնելով այստեղ առկայ մեծ ներուժը», նախագահ Գիորգի Մարգվելաշւիլիի հետ կայացած մամուլի ասուլիս ընթացքին:

Իր հերթին, Վրաստանի նախագահը յայտարարած էր, որ խօսած են հեռանկարային նախագիծերու մասին, որոնք աւելի մեծ տնտեսական շահ ու կայունութիւն կը բերեն տարածաշրջանին:

Հանդիպման օրակարգի վրայ եղած է նաեւ համատեղ արդիւնա-

Շար.ը էջ 5

### Յայտնաբերուած է Մուսա Լերան Հերոսամարտի 25 Նոր Լուսանկարներ

**Հայոց Ցեղասպանութեան թանգարան-հիմնարկի ջանքերով կարելի եղած է յայտնաբերել մինչ օրս անյայտ շուրջ քսանհինգ նոր լուսանկար՝ Մուսա Լերան հերոսամարտի մասնակիցները ֆրանսական ռազմաօդուժի միջոցով տարահանելու տեսարաններով:** Այս մասին, դիմատետրի (Ֆէյսպուքի) իր էջին վրայ, նշած է Հայոց Ցեղասպանութեան թանգարան-հիմնարկի տնօրէն Հայկ Դեմոյեան:



Վերջերս յայտնաբերուած Մուսա Լերան հերոսամարտի լուսանկարներէն մին

Յայտնաբերուած բնօրինակ լուսանկարները առնուած են 1915 Սեպտեմբերին, ֆրանսական ռազմածովային նաւատորմի սպայի մը կողմէ: Լուսանկարները կը ներկայացնեն նաւակներով խաղաղ հայ

բնակչութիւնը դէպի ռազմաօդային տեղափոխելու գործողութիւնները, նաւերու տախտակամածին անոնց տեղաւորումն ու այլ տեսարաններ: Նորայայտ բնօրինակ այս լուսանկարները հանրութեան պիտի ներկայացուին 2018 Ապրիլին:

### ՄԴՀԿ Արեւմտեան Ամերիկայի 18-րդ Պատգամաւորական Ժողովը

Տեղի ունեցաւ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի 18-րդ պատգամաւորական ժողովը:

Կուսակցութեան Փաստօրինայի կեդրոնէն ներս կայացած ժողովին ներկայ էր եւ բացման խօսքով հանդէս եկաւ ՄԴՀԿ Կեդրոնական վարչութեան ատենապետ ԸՆԿ. Տոքթ. Համբիկ Սարաֆեան: Ան ողջունելի նկատեց ժողովին յատկապէս երիտասարդներու մասնակցութիւնը:

Կուսակցութեան տարբեր մասնաճիւղերը ներկայացնող պատուիրակները միօրեայ ժողովի ընթացքին քննարկեցին կուսակցական ներքին կազմակերպական, քաղաքական եւ ազգային տարբեր հարցեր, որոնք շուրջ առնուեցան համապատասխան որոշումներ եւ ընդունուեցան բանաձեւեր՝ որպէս ուղեցոյց յաջորդ տարիներուն համար:

Ժողովի անարտին փակ քուէարկութեամբ ընտրուեցաւ Կուսակցութեան նոր վարիչ Սարմինի կազմը, ղեկավարելու համար Արեւմտեան Ամերիկայի շրջանը՝ յաջորդ երկու տարիներուն:

Նորընտիր վարիչ Սարմինը իր անդրադիմի միտք ընթացքին ընտրեց իր դիւանը, որ կը բաղկանայ հետեւեալ ընկերներէ՝ Գրիգոր Խոտանեան (ատենապետ), Գաբրիէլ Մոլոյեան (փոխ-ատենապետ) եւ Լենա Մանուկեան (քարտուղար):

### Հայաստան Յայտարարեց Որ, Թուրք Նախարարը կը Ստէ

«Թուրքիոյ արտաքին գործոց նախարարը պարզապէս կը ստէ», - յայտարարած է Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան մամուլի քարտուղար Տիգրան Բալայեանը՝ «Արմէնփրէս» լրատուական գործակալութեան խնդրանքով մեկնաբանելով Մեւլութ Չաւուշօղլուի յայտարարութիւնը, թէ իբր հայ-թրքական արձանագրութիւնները ստորագրուած են որոշակի նախապայմաններով:

«Եթէ նոյն տրամաբանութեամբ շարժուենք, ապա կարող ենք յայտարարել, թէ արձանագրութիւնների բանակցման ընթացքում Թուրքիան խոստացել է, որ ճանաչելու է Արցախի անկախութիւնը», - Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան մամուլի եւ տեղեկատուութեան վարչութեան փոխանցմամբ ըսած է Բալայեանը: «Կրկին յիշեցնենք, որ բա-

Շար.ը էջ 5

### ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

## Անցում «Կիսաօլիգարխիկ» Կառավարման Մոտեղից Դեպի «Օլիգարխիկ» Կառավարման Մոտեղ

#### ՍՏԵՓԱՆ ԴԱՆԻԷԼԵԱՆ

Լրատվական հոսքերի գլխավոր հարցադրումը շարունակում է մնալ նույնը. ո՞վ է Ապրիլին դառնալու վարչապետ: Այդ անձի փնտրտուքը (չնայած՝ հիմնականում մեկ անուն է շեշտում) ստուգելու է առկա կարելու դի հարց, թե կառավարման ձևի փոփոխություններ քննարկվող և առկա՞յա և՛ որ փոփոխություններ է կառավարման ձևի փոփոխություններ կամ վարչապետները կ'ունենան: Նույն ազդեցությունը, ինչ մինչ այդ ուներ երկրի նախագահը, թե՛, այնուամենայնիվ, մի ինչ-որ նոր քաղաքական իրավիճակ է ստեղծում:

Սերժ Սարգսյանը պարբերաբար կրկնում է, որ Հայաստանում փոփոխում է կառավարման ձևը, ինչից հետևում է, որ փոփոխում է նաև կառավարման բովանդակությունը: Սերժ Սարգսյանին քչերն են հաւատում, սակայն, կարծես թե, սա այն դէպքերից է, երբ նրան կարելի է վստահել:

Համապետական ընտրությունների միջոցով ընտրված նախագահը (կարելու է, թե ինչպես էին որակում այդ ընտրությունները) կարողանում էր ճշմարտությունը (պատերազմ, «Հոկ-

կան ընտրություններով ընտրված ղեկավարի լիազորություններն ու անձեռնմխելիությունը:

Կառավարման մեզ յայտնի բոլոր մոտեղները ստեղծելու են փորձարկուել են Հին Հռոմում, եւ հետագայ սերունդները կարող են այնտեղ գտնել այդ անցումների հնարաւոր զարգացման մոտեղները: Հայաստանում հիմա տեղի ունեցող նման «անցման» հետեւանքով Հռոմի օլիգարխիան ենթարկուեց իմպերատորներին՝ զօրքերի գերագոյն հրամանատարներին:

«Իմպերատորը» սկզբնական փուլում գինուորական բարձրագոյն կոչում է եղել, եւ Հին Հռոմն այդ փուլից սկսել է «ազգ-բանակ» կառուցել:

Հայաստանի «ազատ քաղաքները»՝ Աժ օլիգարխիները, վառելիքի եւ սննդի ոլորտներում մենաշնորհներ վայելողները, տարածքային հեղինակությունները, կրկնապատժումները կամ նրանց ներկայացուցիչներն ու կուսակցական ֆունկցիոներներն են ճակատագրական որոշումները կայացնելու: Եթէ թւում է, որ այդ գնաճած միջուկային կառավարությունը է մեկ ընդհանուր կենդանությանը՝ Մելիք Ադամեանի փողոցի յայտնի շէնքից, ապա դա հնարաւոր կը լինի իրականաց-

## Աժ օլիգարխները, վառելիքի եւ սննդի ոլորտներում մենաշնորհներ վայելողները, տարածքային հեղինակությունները, կրկնապատժումները կամ նրանց ներկայացուցիչներն ու կուսակցական ֆունկցիոներներն են ճակատագրական որոշումները կայացնելու

տեմբերի 27») կայունացնել իրավիճակը: Յիշենք, որ «Հոկտեմբերի 27»-ից յետոյ ՊՆ-ում այլընտրանքային ուժային կեդրոն էր ձևաւորուել, որը մեծ դժուարությամբ ճնշուեց: Նոր կառավարման մոտեղի պայմաններում աւանդաբար «անմիաբան հայերը» նման իրավիճակներում խորհրդարանում պէտք է լուծումներ որոնեն: Երկրի ղեկավարը՝ վարչապետը, նույնպես ընտրուելու է խորհրդարանի կողմից եւ, ի տարբերություն նախագահի, լինելու է ընդամենը առաջինը հաւասարների մէջ:

Խորհրդարանական կառավարման հիմնական բնութագրիչն այն է, որ կառավարությունը պատասխանատու է միմիայն խորհրդարանի առջեւ, այսինքն՝ դա կառավարման կոլեկտիւ ձև է: Ինչն է ամենահետաքրքիրը՝ նման կառավարման ձևն ունեն զարգացած եւ ինքնակառավարող տնտեսություն ունեցող երկրները, իսկ Հայաստանի նման ճիշտ հակառակ յատկություններ ունեցող երկրում նման համակարգը շատ անսպասելի անակնկալներ կարող է մատուցել:

Համարում է, որ «առաջինը հաւասարների մէջ» տիտղոսը՝ կրել է Յուլիոս Կեսարը, ինչը նշանակում էր, որ նա էր թիւ մէկը, սակայն հաւասար իրաւունքներ ունեցող քաղաքացիների մէջ եւ նրանցից իւրաքանչիւրը կարող է զբաղեցնել Կեսարի տեղը: Ներկայ համակարգում վարչապետը, ըստ էութեան, կատարում է Պրինցեպի դերը, սակայն նա ընդամենը առաջինն է՝ չունենալով համապետա-

նել սկզբնական փուլում: Հետագայում դա կատարուելու է խորհրդարանում ներկայացուած անձերի շահերից ելնելով՝ անկախ կուսակցական պատկանելությունից:

Վերջին տասնամեակում երկրի նախագահի դէմ երկու նշանակալի «ապստամբություններ» փորձ է իրականացուել՝ 2007-ին եւ 2015-ին:

2007-ին ԲՀԿ-ի եւ ՀՀԿ-ի «սրբոր խաչուեցին»: Խորհրդարանական ընտրությունների նախաշեմին երկրի նախագահը՝ ի դէմ ԲՀԿ-ի, պարտուեց վարչապետին՝ ի դէմ ՀՀԿ-ի: 2015-ին Ծառուկեանի ապստամբությունը ճնշուեց, սակայն ԲՀԿ-ն որպէս առանձին բեւեռ պահպանուեց: Եւ այդ բեւեռի դերը գնալով մեծանում է: Այն ապստամբ է լինելու բոլոր «մերժուածների ու հալածեալների» համար՝ նաև տարածքային ֆեոդալների շարքերում գտնուող:

Նոր կառավարման ձևի անցնելուց յետոյ խորհրդարանական պաշտօնական եւ ոչ պաշտօնական ֆրակցիաների ու խմբաւորումների դերը մեծանում է: Մենք, փաստօրէն, «կիսաօլիգարխիկ» կառավարման ձևից անցում ենք կատարում «օլիգարխիկ» կառավարման ձևին:

Գլխաւոր իրադարձություններն առջեւում են, սակայն, կարծես թէ, 2018-ի Ապրիլին չեն կատարուելու: Անցումը խոստանում է լինել «սահուն», սակայն հետագայ զարգացումները, ըստ ունեցած փորձի, լի են անակնկալներով:

«ՀԵՏՔ»

## Սերժ Սարգսեանը Բացայայտել է, Թէ Ովքեր են Կատարելու Չորսմիլիոնանոց Հայաստան Ունենալու Ծրագիրը

#### ՀԱՅԿ ԴԱԻՅԵԱՆ

Ամանորի եւ Սուրբ Ծննդի տօների առթիւ Նախագահ Սերժ Սարգսեանն ընդունելութեան է հրաւիրել գնաճածային լրատուութեան միջոցների ներկայացուցիչներին:

Նա 2017 թուականի կարեւոր համապետական իրադարձությունը, Ապրիլի 2-ին կայացած Ազգային ժողովի ընտրություններն է համարել. «Այժմ յետադարձ հայեացք նետելով՝ կարող ենք վստահաբար արձանագրել, որ այդ ընտրություններն անցան կառուցողական եւ համերաշխ մթնոլորտում: Ընտրություններն արժանացան մեր հանրության եւ միջազգային մասնագիտացուած դիտորդական կազմակերպությունների դրական գնահատականին՝ արդար քրոնիկալքաբարձ գծադրելով յաջող հինգ տարիների մեր քաղաքական խնամքաւորութեամբ: Այդ արդիւնքն արձանագրելու գործում մեծ է եղել նաև Հայաստանի լրատուական դաշտի ներդրումը: Այն ճանաչուել է միջազգային դիտորդական կազմակերպությունների կողմից, եւ ես շնորհակալ եմ ձեր կատարած աշխատանքի համար: Անշուշտ, եղել են նաև դժուարություններ, անհարթություններ, թիրքիւններ: Անվերջ ընտրական գործընթաց աշխարհի որեւէ երկրում գոյութիւն չունի, քանի որ մրցակցաբարձ շիկանում են կրքերը, լարում են նյարդերը: Յիրաւի, երեւի ամենադժուար բանը պարտուելն է. բոլորը չէ, որ կարողանում են դրա հետ համակերպուել», - ասել է նա:

Սերժ Սարգսեանը վստահութիւն է յայտնել, որ բարեփոխուած Սահմանադրութեամբ ձևաւորուող խորհրդարանական հանրապետութեան պայմաններում ՉԼՄ-ները շատ աւելի ընդարձակ դերակատարում են ունենալու, եւ նրանք պատրաստ պէտք է լինեն այն ստանձնելու:

«Կոչ եմ անում գալիք տարիներին աշխուժացնել սփիւռքի համայնքներում գործող լրատուամիջոցների հետ կապերը: 2040 թուականին չորսմիլիոնանոց Հայաստան ունենալու իմ տեսլականի եւ ապագայ այլ ծրագրերի մշակման ու իրականացման ընթացքում իհարկէ ակնկալում եմ ձեր աւելի ակտիւ ներգրաւուածութիւնը:

«Կը ցանկանայի նաև, որ այնպիսի թեմաներ, ինչպիսիք են Հայաստանի մասնակցութիւնն ինտեգրացիոն գործընթացներին, տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքը, համայնքների խոշորացման գործընթացը կամ տնտեսական աշխուժացումը, աւելի մեծ ուշադրութեան եւ խորքային գնահատականների արժանանային ձեր կողմից: Այս ցանկը

անշուշտ ամբողջական չէ: Ես իսկապէս ուրախ կը լինեմ, եթէ դուք հարստացնէք այն՝ իմ ուշադրութիւնից վրիպած թեմաներով», - ասել է Սերժ Սարգսեանը եւ յաւելել, որ գնաճածային լրատուութեան միջոցների դերը եւ նշանակութիւնը քննարկելիս պէտք է մշտապէս յիշենք, որ եւս եօթ միլիոն հայապրում է մայր Հայաստանից դուրս: Այս գործօնը առանձնակի կարեւորութիւն ունի յատկապէս 4 մլն-անոց Հայաստան կառուցելու առումով: Սերժ Սարգսեանը մէկ այլ առիթով ասել է, որ 4 մլն բնակչութիւն ունենալու միակ ճանապարհը ներգաղթն է, եւ այստեղ ՉԼՄ-ները իսկապէս անփոխարինելի դերակատարում ունեն: Հայաստանը Հայաստանից հեռու ապրողներին պէտք է հնարաւորինս պայծառ եւ հրապուրիչ գոյներով ներկայացնել, որպէսզի մարդկանց մօտ հայրենիքում ապրելու իրական ցանկութիւն առաջանայ: Հայաստանից դուրս ապրողները, ինչպէս յայտնի է, տոգորում են յատկապէս «Հայուրի»՝ Հայաստանում ապրելու ցանկութեամբ եւ, որպէս կանոն, գալով հայրենիք՝ համոզուում են, որ «Հայուրի» Հայաստանը գոյութիւն ունի միայն երկնագոյն էկրանի վրատուալ աշխարհում:

Այսպիսով չորսմիլիոնանոց Հայաստան ունենալու Սերժ Սարգսեանի ծրագրի հիմնական կատարողները դառնում են ՉԼՄ-ները: Սպասենք, տեսնենք, թէ ինչ դուրս կը գալ այս պատմութիւնից: **«ՀԱՅԵԼԻ»**

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐ**

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐ**  
 ՊԱՇՏՏԱԹԵՐԹ՝  
 ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԴՆԱՄԻՄՆԵՄԵՆ  
 Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ  
 ՎԱՐԵ ԱՏԱՊԱՐԵԱՆ

**MASSIS Weekly**  
 Organ of the **Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**  
 1060 N. Allen Ave.  
 Pasadena, CA 91104  
 Phone: (626) 797-7680  
 Fax: (626) 797-6863  
 E-Mail: massis2@earthlink.net  
 http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
 Published Weekly  
 Except Two Weeks in August

**ANNUAL SUBSCRIPTION RATES:**  
 USA \$50.00, \$100.00 (First Class)  
 Canada \$125.00 (Air Mail)  
 Overseas \$250.00 (Air Mail).  
 All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid  
 at Pasadena CA.  
 Please Send Address Change To  
**MASSIS WEEKLY**

**Հրատարակելով  
 հայաստանեան մամուլին  
 մէջ լոյս  
 տեսնող տարբեր  
 յօդուածներ «ՄԱՍԻՍ»  
 անպայմանօրէն  
 չի բաժնոր հոն  
 արտայայտուող բոլոր  
 միտքերը**

**ԱՆՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ**

**«Մարդկանց Սօս Տպալորութիւն Է Ստեղծուում, Որ Հայաստանում Կայ Մէկ Կուսակցութիւն»։ Դանիէլ Իօաննիսեան**

«Իրագեկ քաղաքացիներ ձիւ-աւորում» հասարակական կազմակերպութեան համակարգող Դանիէլ Իօաննիսեանի կարծիքով՝ Հայաստանի մէջ մարդիկ հիմնական-ընդհանուր չեն վերաբերուի կուսակցութիւններուն:



«Իրագեկ քաղաքացիների միավորում» կազմակերպության համակարգող Դանիէլ Իօաննիսեան

«Որ երբ հրապարակուեցին սոցհարցումների արդիւնքներ, ըստ որոնց, հայաստանցիների միայն 9 տոկոսն է վստահում կուսակցութիւններին: Համեմատութեան համար ասեմ, որ քաղաքացիական հասարակութեանը վստահում է հասարակութեան 29 տոկոսը: Անգամ ոստիկանութեանը երկուսուկէս անգամ աւելի շատ են վստահում հայաստանցիները, քան կուսակցութիւններին, Ազգային ժողովին վստահում են ընդամենը 12 տոկոսը: Այսինքն՝ թէեւ մենք անցնում ենք խորհրդարանական պետութեան, բայց խորհրդարանի եւ դրա ձեւաւորման հիմնական ուժերի՝ կուսակցութիւնների վստահութեան ցուցանիշը շատ-շատ ցածր է եւ անվստահութեան ցուցանիշը շատ բարձր է», - «Կիրակնօրեայ-վերլուծական Հրայր Թամրազեանի հետ» հաղորդման ժամանակ ըսած է Իօաննիսեան, նշելով, որ սա արդիւնք է տարիներու ընթացքին վերգետնայ սփռման լրատուամիջոցներու՝ հեռուստատեսութիւններ եւ այլն, հարցերու միակողմանի լուսաբանման:

«Երբ լուսաբանման արդիւնքում մարդկանց մօտ տպաւորութիւն է ստեղծուում, որ Հայաստանում կայ մէկ կուսակցութիւն, այդ մէկ կուսակցութիւնից մարդիկ առարկայական եւ ենթակայական պատճառներով դժգոհ են, այդ մէկ կուսակցութեանն էլ շատերը չեն սիրում, եւ ստացում է, որ ոչ մի կուսակցութեանը մարդիկ չեն սիրում, որովհետեւ մարդկանց թւում է, որ

Ըստ Դանիէլ Իօաննիսեանի «Ա1+»-ի եւ «Նոյնի Տպալոր»-ի փակումէն յետոյ մենք ականատես ենք ասոր եւ որու արդիւնքը եղաւ այն, որ մարդկանց վստահութիւնը կուսակցութիւններու նկատմամբ շատ ցած է:

**Վեներտիկի Յանձնաժողովին Ուղարկուած Նախագիծը Եւ ԱԺ-ի Մէջ Քուէարկութեամբ Ընդունուածը Նոյնը Չեն**

Վեներտիկի յանձնաժողովի կողմէ բաւական լաւ վերլուծուած է դատական օրէնսգիրքի նախագիծը, սակայն կը պարզուի, որ Վեներտիկի յանձնաժողովին ուղարկուած նախագիծը ԱԺ-ի մէջ քուէարկութեամբ ընդունուած նախագիծը չէ: «Դատական օրէնսգիրքի ընդունումը խորհրդարանում, ինչպէս յարուց դրոյթներ եւ մտահոգութիւններ» թեմայով քննարկման ժամանակ այս մասին նշած է Հեղինաքեան Քաղաքացիական ժողովի վանաձորի գրասենեակի ղեկավար Արթուր Սաքունցը:

Անոր խօսքով, Վեներտիկի յանձնաժողովը ներկայացուցած է 7 առաջարկ, որոնցմէ 4-ը չէ ընդունուած, 2-ը մասնակի ընդունուած է, եւ միայն մէկը ամբողջութեամբ ընդունուած է, սակայն ԱԺ-ի մէջ բոլորովին այլ նախագիծ դրուած է քուէարկութեան: «Այսինքն Վեներտիկի յանձնաժողովին մի նախագիծ է ուղարկուել, իսկ ԱԺ-ում մէկ ուրիշ նախագիծ է ընդունուել: Սա մանր կամ խոշոր խուրիմանութիւն է, որի բուն իմաստը եւ չեմ հասկանում: Մի կողմից դա զարմանալի չէ, միւս կողմից էլ ցոյց է տալիս, որ իշխանութիւնն այնքան վստահ

չի իր ներկայացրած նախագիծի հետ կապուած, որ նման մակարդակի աճարարութեամբ է գբաղուում», - ըսած է Սաքունց: Ան տեղեկացուցած է, որ դատական օրէնսգիրքի նախագիծի վերաբերեալ առաջարկութիւնները մեծ փաթեթ ներկայացուած է նաեւ «Բաց հասարակութեան հիմնադրամներ» արդարադատութեան խորհուրդի կողմէ, որոնցմէ ոչ մէկը չէ ընդունուած, նոյնիսկ քննարկում չէ կազմակերպուած: «Դատական օրէնսգիրքը, մեծ առումով չէր կարող չաղթահարել Սահմանադրութեամբ ամրագրուած սահմանափակումները, բայց նաեւ հարկ չեն համարել հանրային քննարկման ղեկ, ինչը վկայում է բուն պետական հակումներ ունեցող գործելու մասին: Ձբաղուել աճարարութեամբ ու խուլիգանութեամբ, սա արդէն իշխանութեան ու կայուն մեծամասնութեան վերաբերմունքն է դատական իշխանութեան նկատմամբ, իսկ վերջիններիս կողմից ծպտուն անգամ չի լսուում», - իր խօսքը ամփոփած է իրաւապաշտպանը: Յիշեցնենք, որ Դատական օրէնսգիրքը Ազգային ժողովի կողմէ ընդունուած է 21 դեկտեմբերին:

**«Հայաստանի Մէջ Արդար Դատաքննութեան Իրաւունքը Ապահովուած Չէ»։ Ա. Զեյնալեան**



Արտակ Զեյնալեան (ձախից) եւ Ալետիք Իշխանեան լրագրողներու հետ հանդիպումի ընթացքին

Դեկտեմբեր 26-ին լրագրողներուն հետ հանդիպման ժամանակ ՀՀ ԱԺ «ԵԼԷ» դաշինք խմբակցութեան անդամ, պատգամաւոր Արտակ Զեյնալեան ըսած է թէ, անցեալ տարի տեղի ունեցած մարդու իրաւունքներու խախտումներու մասին խօսելը դժուար է: «Ալետի հեշտ է թոյլ չտալ, որ իրաւունքը խախտուի, քան զբարեկէտ դրանց հետեւնալ վերացմամբ: Մտահոգիչ է անձնական ազատութեան անձեռնմխելիութեան վիճակը: Կալանք, ձերբակալութիւն, պահման պայմաններ: Եթէ մարդը կարիք ունի դատական պաշտպանութեան իրաւունքի, արդէն իսկ նրա արդար դատաքննութեան իրաւունքը խախտուած է, քանի որ չկան արդիւնաւէտ կառուցակարգեր այդ իրաւունքի ապահովման համար», - ըսած է Զեյնալեան:

Անոր խօսքով, արդար դատաքննութեան բաղադրատարր հանդիսացող «ողջամիտ ժամկէտի իրաւունքը» ապահովելու համար բաւարար չափով դատաւորներ պիտի ըլլան, իսկ անոնց թիւը չափաւոր չէ՛ն երեք անգամ պակաս է: Նոյն ասուելիս մասնակցող

Հայաստանի Հեղինաքեան կոմիտէի նախագահ Ալետիք Իշխանեան իր կարգին յայտնած է որ, Հայաստանի մէջ մարդու իրաւունքները համատարած կերպով կը խախտուին:

Իրաւապաշտպանը յիշեցուցած է նաեւ Ազգային ժողովի եւ Երեւանի աւագանիի ընտրութիւնները: Ան ըսած է. «Իշխանութիւնները կարողացան հասնել նրան, որ եղաւ քուէարկութիւն, ոչ թէ ընտրութիւն: - Քուէարկում է հպատակը, ընտրում է քաղաքացին: Մենք եկանք այդ վիճակին: Խօսել ընտրութիւնների մասին 90-ականներից անիմաստ է», - եզրակացուցած է Իշխանեան:

Ալետիք Իշխանեան անդրադարձած է նաեւ նախընտրական շրջանին մարդու իրաւունքներու խախտումներուն. - «Աշխատանքային իրաւունքները պէտք է պաշտպանուեն: Յիշենք «ՍԱՍ»-ի դէպքը... որ մարդիկ ազատ լինեն իրենց աշխատանքի մէջ, ճնշման տակ ստրկական աշխատանք չլինի, հալածանքի չենթարկուեն: Նոյն դպրոցների հարցը: մարդիկ ազատ լինեն, պիզնեսը ազատ լինի, չպիտի ինչ-որ ուժի ներքոյ լինի»:

**Տնտեսագետ Ալետիք Իշխանեանի Հնչեցուցած Թիւերը Հաւատք Չեն Ներշնչեր**

«Նախագահ Սերժ Սարգսեանի հրապարակած թիւը այս տարի սպասուող աւելի քան 6 տոկոս տնտեսական աճի մասին, հաւատք չի ներշնչեր եւ ակնյայտօրէն ուղծացուած են», - «Ազատութեան» հետ զրոյցի ժամանակ ըսած է տնտեսագետ, Հայ ազգային գոնկրեսի ներկայացուցիչ Վահագն Խաչատրեանը:



Տնտեսագետ Վահագն Խաչատրեան

Անոր խօսքով, յատկապէս կասկածելի են գիւղատնտեսութեան վերաբերող թիւերը. - «Անցեալ տարի Հոկտեմբերը նախորդ Հոկտեմբերի նկատմամբ 30 տոկոս անկում եղաւ, հիմա Հոկտեմբերի նկատմամբ 30 տոկոս աճ եղաւ, եւ այս թուային խաղերի արդիւնքում հիմա կարող են ասել, որ ունեն 6 տոկոս: Ես չէի գարմանայ, եթէ ասէին 8 տոկոս կամ 10 տոկոս»:

չափ նախադրեալներ են ստեղծուել, որպէսզի տարին փակենք բաւարար տնտեսական աճով: Կանխատեսումներ չանեմ, բայց կարծում եմ տնտեսական աճ 6 տոկոսից աւելին ենք ունենալու»:

Հոկտեմբերին հրապարակուած Արժօնային միջազգային հիմնադրամի կանխատեսման համաձայն 2017-ին Հայաստանի տնտեսական աճը պիտի կազմէ 3.5 տոկոս: Իսկ Համաշխարհային դրամատունը այս յունիսին աւելի փոքր թիւ նշած է՝ 2.7 տոկոս:

# ԼՈՒՐԵՐ

## Էրտողանի Կուսակիցը Խորհրդարանին Մէջ Փորձած է Յարձակիլ Կարօ Փայլանին Կրայ



Իշխող կուսակցութեան անդամը կը փորձէ մտնել Կարօ Փայլանին

Թուրքիոյ ընդդիմադիր Ժողովուրդներու ժողովրդավարական կուսակցութեան անդամ, խորհրդարանի հայ պատգամաւոր Կարօ Փայլան խորհրդարանին մէջ կրկին յարձակումի ենթարկուած է իշխանական կուսակցութեան ներկայացուցիչներու կողմէ:

Հայ պատգամաւորը իր ելոյթի ժամանակ կոչ ըրած է Թուրքիոյ ելեւմուտքի նախարար Նաճի Աղպալին յատուկ ուսումնասիրութիւն սկսելու նախագահ Ռեճեփ Թայիփի էրտողանի ու վարչապետ Պինարի Երլարըմի ընտանիքի անդամներուն՝ Մեն կղզիին մէջ անդրցամաքային ընկերութիւններու հետ կապի վերաբերեալ:

Ատոր ի պատասխան՝ բարկացած նախարարը փորձած է վիրաւորել Փայլանը. «Դուք երեւի վերջին մարդն էք, որմէ պէտք է բարոյականութեան դաս առնենք, սակայն այդ ալ չէք: Մա յատուկ կ'ուզեմ շեշտել. դուն այս խորհրդարանին մէջ նոյնիսկ ամենավերջին մարդն ալ չես»:

«Ամբարտաւանութիւն չընես», - զգուշացուցած է Փայլան թուրք նախարարին, որուն ի պատասխան՝ վերջինս տեղէն ելած ու քալած է Փայլանի ուղղութեամբ՝ փորձելով յարձակիլ անոր վրայ: Վէճին խառնուած են նաեւ այլ

պատգամաւորներ:  
Լարուածութեան պատճառով խորհրդարանի նիստը ստիպուած եղած են ընդհատելու:

Միւս կողմէ, Կարօ Փայլան յայտարարած է, որ իրեն տեղեկութիւններ հասած են այն մասին, որ Թուրքիայէն Եւրոպա տեղափոխուած շարք մը հայերու, այլեւհետեւ, ինչպէս նաեւ Թուրք ընդդիմադիր լրագրողներու, գրողներու ու մտաւորականներու կեանքին վտանգ կը սպառնայ:

Ըստ թրքական «Gazetekarınca.com» լրատուական կայքին, Փայլան այս հարցի վերաբերեալ գրաւոր յայտարարութիւն տարածած է, ուր գրած է. «Ինձի տեղեկութիւն հասած է այն մասին, որ Եւրոպայի, յատկապէս՝ Գերմանիոյ մէջ ապրող հայկական ու այլեւհետեւ համայնքներու ներկայացուցիչներու, ինչպէս նաեւ Թուրքիոյ մէջ AKP-ական իշխանութիւններու վարած քաղաքականութեան հետեւանքով ստիպուած երկրէն հեռացած լրագրողներու, գրողներու, դիւանականներու ու հասարակական գործիչներու դէմ մահափորձեր կը նախապատրաստուին»:

Փայլան նշած է, որ ահաբեկչութիւնները ծրագրող խումբերը կ'ուղղորդուին Թուրքիայէն:

## Սերժ Սարգսեան- «Պետականութեան Զինքերը Խարխուլելու Փորձերը Դատապարտուած են Չախողման. Զենքով Ոչ Մէկ Զարց կը Լուծուի»



Սերժ Սարգսեան ելոյթ կ'ունենայ «Ազգային Անվտանգութեան Ծառայութեան» ղեկավարութեան առջեւ

«Ազգային Անվտանգութեան Ծառայութեան» ղեկավարութեան առջեւ ելոյթ ունենալով, նախագահ Սերժ Սարգսեան ըսած է որ, Սահմանադրական կարգի ամրութիւնը երկրի անկախութիւնը, պետութեան եւ ժողովուրդի պաշտպանութեան եւ ժողովուրդի պաշտպանութեան նախապայմանն է: Այս արժէքը թիրախաւորող որեւէ քայլ իրական սպառնալիք է ազգային անվտանգութեան համար:

«Արկածախնդրութիւն փնտռողները պէտք է քաջ դիտակցին, որ Հայաստանի մէջ պետականութեան հիմքերը խարխուլելու փորձերը դատապարտուած են ձախողման: Հայաստանի մէջ բռնութեամբ եւ զէնքով ոչ մէկ հարց կը լուծուի: Ուժի օրինական կիրառման մենաշնորհը կը պատկանի Հայաստանի Հանրապետութեան: Ինչ-ինչ հարցեր, վէճեր, դժգոհութիւններ, տարաձայնութիւններ քննարկելու եւ լուծելու համար Սահմանադրութեամբ եւ օրէնքով ստեղծուած են բոլոր անհրաժեշտ հիմնարկները եւ մեխանիզմները», ըսած է ան:

«Կապած է վեր է, որ ազգային անվտանգութեան ծառայութիւնը եւ մեր իրաւապահ միւս մարմին-

ները ունակ են կանխելու կամ չէզոքացնելու նման որեւէ ոտնձգութիւն: Կը կարծեմ՝ անցեալ տարի յուլիսին ձեր հետեւողական գործողութիւններն ու հաւասարակշռած մօտեցումները խօսքերիս լաւագոյն պայացուցն են:

«Նրանք, ովքեր ապագայում փորձելու են իրենց անձնական կամ խմբային շահերին հասնել հակաիրաւական գործելակերպով, խորհուրդ եմ տալիս գերծ մնալ արկածախնդրութիւնից: Մեր իրաւապահները պատրաստ են օրէնքով իրենց վերապահուած իրաւասութեան շրջանակներում եւ համարժէք միջոցներով հակազդել սահմանադրական կարգը վտանգող ցանկացած դրսեւորման:

«Համոզուած եմ՝ անվտանգութեան երաշխաւորումը ազատութեան հաշուին կամ ազատութեան երաշխաւորումը անվտանգութեան հաշուին հաւասարապէս վնասաբեր է: Տարիներ շարունակ մեր բոլոր քայլերը ուղղուած եղած են երկրի մէջ հանրային անդորրի եւ համերաշխութեան ամրապնդման: Իհարկէ այդպէս ալ մենք պիտի աշխատինք նաեւ ապագային», եզրակացուցած է Սերժ Սարգսեան:

## Երուսաղէմի Կարգավիճակի Վերաբերեալ Հայաստան Կողմ Քուէարկած ՄԱԿ-ի Բանաձեւին

Հայաստան արդէն իսկ յայտնած է Երուսաղէմի կարգավիճակի վերաբերեալ իր դիրքորոշումը, եւ այն մնացած է անփոփոխ: Այս մասին յայտարարած է արտաքին գործոց նախարարութեան մամուլի քարտուղար Տիգրան Բալայեան՝ «Ազատութեան» հետ գրոյցի ժամանակ մեկնաբանելով Հայաստանի կողմ քուէարկելը ՄԱԿ-ի Գլխաւոր ժողովի բանաձեւին, որ կոչ կ'ընէ Միացեալ Նահանգներուն հրաժարիլ Երուսաղէմը Իսրայէլի մայրաքաղաք ճանչնալու որոշումէն:

«Երուսաղէմի կարգավիճակի հարցը միջազգային օրակարգի կարեւորագոյն խնդիրներէից է եւ կարող է լուծուի ստանալ բանակցութիւնների միջոցով՝ իսրայէլապաղեստինեան հակամարտութեան կողմերի համար ընդունելի կարգաւորման համաթեքսթով: Դա կարող է ճանապարհ հարթել տեւական անվտանգութեան եւ խաղաղութեան հաստատման համար», - նշած է Բալայեան:  
«Երուսաղէմում առկայ է բազ-

մադարեայ հայկական ներկայութիւն, հարուստ հայկական պատմա-մշակութային ժառանգութիւն: Հայ Առաքելական եկեղեցին հանդիսանում է Սուրբ վայրերի իրաւատէր եկեղեցիներից մէկը: Բնականաբար, մենք ուշադրութեամբ ենք հետեւում Երուսաղէմին առնչուող բոլոր զարգացումներին: Նկատի ունենալով Երուսաղէմի վերաբերեալ վերջին շրջանում արտայայտուած դիրքորոշումները՝ ընդունում ենք, որ դրանք չեն կանխորոշում բանակցութիւնների միջոցով Երուսաղէմի վերջնական կարգավիճակի սահմանումը», - ընդգծած է Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչութեան խօսնակը:


Յիշեցնենք, որ Միացեալ Նահանգներու նախագահ Տանըլտ թրամբի կողմէ Երուսաղէմը Իսրայէլի մայրաքաղաք ճանչնալէ ետք միջազգային օրակարգի մեկնաբանութեամբ հանդէս եկած էր Հայաստանի արտաքին գործոց նախարար Էտուարտ Նալպանտեանը:

## ԱՄՆ-ը Պատժամիջոցներ Սահմանած է Հայաստանի Դիւանագիտական Անճազիր Ունեցող Ռուբէն Թաթուլեանի Դէմ

ԱՄՆ ֆինանսներու նախարարութեան Օտարերկրեայ ունեցուածքներու վերահսկման գրասենեակը (OFAC) պատժամիջոցներ սահմանած է ուսումնասցի տաս «օրէնքով գողերու» նկատմամբ: Ցուցակին մէջ ներառուած է նաեւ հայազգի Ռուբէն Թաթուլեանի անունը, որ չափնի է «Ռուպլը» ծածկանունով եւ Հայաստանի վարչապետին տարեսկզբին աջակցութիւն յայտնած գործարարներէն է, որոնք յայտարարած էին, որ պիտի աջակցին Կարէն Կարապետեանին՝ Հայաստանի մէջ «խոր բարեփոխումներ իրականացնելու գործին»:

Պատժամիջոցներու ցանկին մէջ յայտնուած է նաեւ սոչիաբնակ Ռուբէն Թաթուլեանին պատկանող «Վեսնա» հիւրանոցն ու Մոսկուայի մէջ գրանցուած «Նովիչ Վեկ Մետիա» ընկերութիւնը:

«Թաթուլեանը «օրէնքով գողերուն» ֆինանսական աջակցութիւն տրամադրած է: 2010-ին ան նշանակուած է Սոչիի «Նայոդ»: Ան եւ Չախարի Քալաշովը ձերբակալ-



«Օրէնքով գող» Ռուբէն Թաթուլեանի անունը յայտնուած է Ամերիկեան պատժամիջոցներու ցանկին վրայ

ուած էին 2015 թուականին, Սոչիի մէջ՝ քրէական հեղինակութիւններու հաւաքի ժամանակ: Բացի այդ ան մի քանի անգամ օգնած է օրէնքի հետ խնդիրներ ունեցող գողերուն», - նշուած է OFAC-ի հաղորդագրութեան մէջ:

Նշենք, որ Ռուբէն Թաթուլեան ՀՀ դիւանագիտական անձագիր ունի:

### Իրանի Նախագահը Այցելած է Պատերազմին Չոհուած Զայ Զինուորներու Ընտանիքներուն



Իրանի նախագահը Նոր Տարուայ եւ Սուրբ Մննդեան տօներու առթիւ այցելած է իրանահրաքեան պատերազմի ընթացքին զոհուած էտուին Շահմիրեանի եւ Ժորժ Քէշիշարու թիւնեանի ընտանիքներուն:

Հասան Ռուհանին ըսած է, որ «իրանահայերը իրանի հասարակու-

թեան մէջ առանձնապատուկտեղ ունին եւ մեծ յարգանք կը վայելեն»:

Իրանագէտ Արմէն Իսրայէլեանը ֆէյսպուքեանի ինքն զրած է, որ 1980-1988 թուականներուն իրանահրաքեան պատերազմին 17,000 իրանահայ մասնակցած է, որոնցմէ 260-ը նահատակուած են:

### Ատրպէյճանի Կողմէ Կաշառուած Են Շուէտի ԱԳՆ-ի Կողմէ Ֆինանսաւորում Ստացող Զինարկն ու Տնօրէնը

Շուէտական առաջատար «Dagens Nyheter» թերթը Ատրպէյճանի՝ կաշառակերական գայթակղութիւններու մէջ ներգրաւուած ըլլալու մասին նոր բացայայտումներ ներկայացուցած է: Ըստ թերթին, Շուէտի Արտաքին Գործոց նախարարութեան կողմէ ֆինանսաւորուող Քաղաքական անվտանգութեան եւ զարգացման Սթոքհոլմի հիմնարկի (ISDP) տնօրէն Սվանթէ Քորնելին Ատրպէյճանի կողմէ կաշառուած է, հիմնարկն ալ աշխատած է արտերկրի մէջ Ատրպէյճանի դրական վարկանիշ ապահովել:



ISDP-ի տնօրէն Սվանթէ Քորնելի

տած է, որ Քորնելին եւ ISDP-ն սերտ յարաբերութիւններու մէջ են Ատրպէյճանի իշխանութիւններուն հետ:

Թերթը կը վկայակոչէ այն հանգամանքը, որ ISDP-ն ֆինանսաւորում կը ստանայ նաեւ «Telia Sonera» ընկերութենէն: ISDP-ի միւս հովանաւորը «Եւրոպական Ատրպէյճանի հասարակութիւն» լոպպիստական կազմակերպութիւնն է, որ ըստ The Economist 1843 ամսագրին, կը պատկանի Ատրպէյճանի նախարարներէն մէկուն որդիին:

### Սերժ Սարգսեան Թիֆլիսի Մէջ

Շարունակուած էջ 1-էն

բերական ձեռնարկութիւններու ստեղծման հարցը:

Սերժ Սարգսեան հանդիպում ունեցած է նաեւ Վրաստանի վարչապետ Կիրիլ Կվիրիկաշվիլիի հետ:

Ողջունելով Սարգսեանին Կվիրիկաշվիլին նշած է, որ հայ-վրացական յարաբերութիւնները միշտ եղած են ջերմ ու բարիդրացիական եւ այսօր ալ կը շարունակեն այդպիսին մնալ:

Ի պատասխան Հայաստանի նախագահը վստահութիւն յայտնած է, որ Վրաստանի վարչապետի հետ հանդիպումը բացառապէս

դրական ազդեցութիւն կ'ունենայ վերելք ապրող երկկողմ յարաբերութիւններուն վրայ:

Թիֆլիս այցի երկրորդ օրը Սերժ Սարգսեան հանդիպած է նաեւ Համայն Վրաստանի Կաթողիկոս-պատրիարք Իլիա երկրորդի եւ Վրաստանի խորհրդարանի նախագահ Իրաքլի Քոպախիձէի հետ:

Վերլուծաբան Ստեփան Գրիգորեանի կարծիքով՝ ակնյայտ է, որ վերջին տարիներուն Հայաստանի իշխանութիւնները սկսած են աւելի կարեւորել հայ-վրացական յարաբերութիւնները:

«Մերոնք չիչեցին, որ Վրաստանը կարեւոր է ոչ միայն այն պատճառով, որ հասկանում են, որ

### Երտողանի Կողմնակիցներէն Երկուքը Ուաշինկթընի Դատարանին Մէջ Ընդունած Են Իրենց Մեղքը



Ուաշինկթընի մէջ Թուրքիոյ դեսպանի կացարանի դիմաց Ռեճեփ Թայիփ Էրտողանի դէմ խաղող ցուցարարներու վրայ յարձակած երկու թուրք ընդունած են իրենց մեղքը: Ինչպէս կը հաղորդէ «Արմէնքրէս»-ը, այս մասին յայտնած է «Ամերիկայի ձայն»-ի թրքական ծառայութիւնը:

Վրճինիա բնակող 45-ամեայ Սինան Նարին եւ Նիւ ձըրզի բնակող 50-ամեայ էյուպ Երլտըրը մ Գոլոմպիայի դատարանէն ներս ընդունած են «ծանր վնասուածքներու պատճառ դարձած յարձակում գործելու» մեղադրանքը:

Դատարանը անոնց համար պահանջած է մէկ տարի եւ մէկ օր ազատազրկում:

Նշենք, որ Սեպտեմբերին Միացեալ Նահանգներ կատարած այցելութեան ժամանակ Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Մեւլութ Չաւուշօղլուն բանտին մէջ հանդիպած էր Սինան Նարինին եւ էյուպ Երլտըրըին:

Միացեալ Նահանգներ այցելող Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողանի դէմ մայրաքաղաք Ուաշինկթընի մէջ 16 Մայիսին կազմակերպուած խաղող ցոյցի մասնակիցները խումբ մը թուրք ազգայնամոլներու կատարող յարձակման թիրախ դարձած էին: Մի քանի վիրաւորներ արնաշաղախ հիւանդանոց տեղափոխուած էին: Յայտնի

է, որ յարձակում իրականացնողներու շարքին եղած են նաեւ Էրտողանի անվտանգութեան աշխատակիցները: Աւելի ուշ յայտնուած տեսանիւթին մէջ երեւցած էր, թէ ինչպէս Էրտողան ցուցարարներուն վրայ յարձակելու հրահանգ կու տայ:

Ուաշինկթընի քաղաքապետ Մուրիել Պոուսերը եւ ոստիկանապետ Փիթըր Նշեմ 15 Յունիսին կայացած համատեղ մամլոյ ասուլիսի ժամանակ յայտարարած էին, որ 16 մայիսին խաղող ցուցարարներու վրայ յարձակում իրականացուցած՝ Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողանի կողմնակից խումբի 12 անդամի ձեռքաւարութեան հրաման տրուած է:

Յարձակման մասնակից ԱՄՆ երկու թուրք քաղաքացի ձեռքաւարուած էին:

ԱՄՆ Ներկայացուցիչներու պալատը 6 յունիսին միաձայն ընդունած էր թիւ 354 Երկկուսակցական բանաձեւը, որ կը դատապարտէ 16 մայիսին ԱՄՆ-ի մէջ Թուրքիոյ դեսպանի նստավայրի դիմաց Ռեճեփ Թայիփ Էրտողանի թիկնապահներու կողմէն խաղող ցուցարարներու դէմ բռնութիւնը եւ կոչ կ'ընէ օրինազանցները ենթարկել քրէական պատասխանատուութեան եւ քայլեր ձեռնարկել նմանատիպ միջադէպերը բացառելու համար: Բանաձեւին կողմ քուէարկած են 397 ներկայացուցիչ:

### Հայաստան Յայտարարեց

Շարունակուած էջ 1-էն

նակցութիւնները 2008 թուականին մեկնարկեցին թուրքական կողմի հետ հենց այն փոխադարձ համաձայնութեամբ, որ այդ գործընթացը չի կարող ունենալ որեւիցէ նախապայման: Այս համաձայնութեան հիման վրայ ընթացան բանակցութիւնները եւ ստորագրուեցին ցիւրիխեան արձանագրութիւնները: Նախապայմանների բացակայութեան մասին բազմիցս են յայտարարել գործընթացին լաւատեղեակ տարբեր մայրաքաղաքները», - ընդգծած է Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչութեան խօսնակը:

Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Մեւլութ Չաւուշօղլուն 20 Դեկտեմբերին Պաքուի մէջ մաս-

նակցութեան յայտարարած է. - «Անգարան Երեւանի հետ գիւրիխեան արձանագրութիւնները ստորագրել է որոշակի պայմաններով. Հայաստանը պէտք է լքի գրաւուած տարածքները, ինչից յետոյ մենք կարգաւորում ենք մեր կապերը՝ սա հր հիմնական պայմանը»:

Յիշեցնենք, որ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանը երեք ամիս առաջ ՄԱԿ-ի ամպիոնէն յայտարարեց, որ 10 Հոկտեմբեր 2009-ին ստորագրուած գիւրիխեան արձանագրութիւններու կենսագործման ուղղութեամբ շարունակաբար որեւէ դրական տեղաշարժի բացակայութեան պայմաններուն պաշտօնական Երեւանը եկող տարուայ գարնան արձանագրութիւնները առ ոչինչ պիտի յայտարարէ:

կարեւոր է, ընդհանուր սահմանուններ: Լաւ է, որ թրանսփորթի (տեղափոխութեան) մասին են խօսում, էներգիկ թիքայի (ուժանիւթի) մասին են խօսում, ակնյայտ է: Վրաստանը եւ Հայաստանը կարող են լինել տարանցիկ երկրներ եւ

նախկին, եւ կազմի համար, եւ միմեանց համար, եւ աշխարհի համար, Եւրոպայի համար: Օրինակ նախկին եւ կազմի Իրանից տեղափոխել դէպի Եւրոպա», - «Ազատութեան» հետ զրոյցի ժամանակ ըսած է Գրիգորեան:

**Աթեշեան.**

**Պէքճեան Ետ Պէտք է Կանգնի Պոլսոյ Հայոց Պատրիարքի Տեղապահի Պաշտօնէն**



Պոլսոյ հայ համայնքը նոր հոգեւոր առաջնորդ պիտի չունենանայ այնքան ժամանակ, քանի դեռ Գարեգին արքեպիսկոպոս Պէքճեան ետ չէ կանգնած Պատրիարքի տեղապահի պաշտօնէն եւ ամէն ինչ չէ վերադարձած իր հին վիճակին: Երէկ նման յայտարարութիւն ըրած է Պոլսոյ Հայոց պատրիարքական աթոռի միաբան Արամ արքեպիսկոպոս Աթեշեան:

Իրեն անուանելով պետութեան կողմէ ընդունուած Պատրիարքական ընդհանուր փոխանորդ, Աթեշեան յայտարարած է, որ Թուրքիոյ իշխանութիւնները չեն ընդունիր 15 Մարտին Պատրիարքարանի հոգեւորականներու կողմէ տեղապահ ընտրուած Գարեգին արք. Պէքճեանը: Աթեշեան ըսած է, որ այդ ընտրութիւնները տեղի ունեցած են առանց իշխանութեան համաձայնութեան:

«Մենք Պատրիարքին հանգիստի կոչելու իրաւունք ալ չունինք: Պատրիարք ընտրողներու 7-էն մէկը հոգեւորականներ են, 7-էն 6-ը աշխարհականներ են, եւ մենք աշխարհականներով՝ առանց հարցնելու, ինքնազուլի, Պատրիարքին հանգստեան կոչեցինք. ի՞նչ իրաւունքով», - ըսած է Արամ արքեպիսկոպոս Աթեշեան Երեւանի մէջ կայացած ասուլիսի ժամանակ: «Ես կը նախագուշակեմ անոնց, որ մենք այդ իրաւունքը չունինք», - շեշտած է ան:

Յիշեցնենք, որ դեռ այս տարուայ Օգոստոսին պատրիարքական ընտրութիւնները նախաձեռնող խումբը դիմած էր Պոլսոյ նահանգապետարան՝ առաջարկելով նոր Պատրիարքի ընտրութիւնները իրականացնել 13 Դեկտեմբերին: Կանկակալուէր, որ Պոլսոյ նահանգապետարանը դիմումին պէտք է պատասխանէր մինչեւ 9 Հոկտեմբեր, սակայն մինչ օրս որեւէ արձագանգ չէ եղած: Աթեշեան երէկ համոզմունք յայտնած է, որ պատասխան պիտի չի ալ ըլլայ, քանի որ իշխանութիւնը Պէքճեանին՝ հետեւաբար նաեւ ընտրութիւններու արդիւնքները չընդունիր: Արքեպիսկոպոսի խօսքով, Պոլսոյ նահանգապետարանէն ալ ըսած են՝ «ընտրութիւն կ'ուզէք, ուրեմն ամէն ինչ վերադարձուցէք հին վիճակին»:

«Ազատութեան» հարցին, թէ ի վերջոյ ինչպէ՞ս պէտք է հանգուցալուծուի տարիներ շարունակ ձգձգուող հարցը, Աթեշեան արձագանգած է. - «Գարեգին սրբազանն է՝ ինքը պիտի որոշէ: Եթէ ընտրութիւն կ'ուզէ, եւ պետութիւնը իրեն չի ճանչնար, ուրեմն պիտի ըսէ՝

«մնաք բարով, ես մէկ կողմ կը քաշուիմ»:

«Իսկ ան կ'ուզէ մէկ կողմ քաշուիլ, թէ՞ չէ», հարցին արքեպիսկոպոսը պատասխանած է. - «Եթէ ինծի նամակ գրեն, կը քաշուիմ», - ըսած է:

Իսկ այն հարցին, թէ «եթէ Գարեգին Պէքճեանը ետ չկանգնի, ի՞նչ պիտի ըլլայ», - Արամ Աթեշեան արձագանգած է. - «Չեմ գիտեր, այսպէս կը շարունակուի: Եւ մենք ըսինք Գարեգին սրբազանին, աշխարհականներէն ալ ոմանք ըսին. առայժմ յամառօրէն կը մնայ»:

Պատրիարքի ընտրութիւններու ձգձգման հարցը պարզաբանելու պահանջով մօտ մէկ շաբաթ առաջ Թուրքիոյ ներքին գործոց նախարար Սուլէյման Սոքուլին դիմած էր նաեւ երկրի խորհրդարանի հայագի պատգամաւոր Կարօ Փայլանը: Անոր նամակը հաւանաբար եւս անպատասխան կը մնայ, ըսած է Աթեշեանը: Հոգեւորականը նաեւ յայտարարած է, որ Փայլանի ելոյթներու պատճառով պոլսահայ համայնքին մէջ անհանգստութիւն կայ. - «Խորհրդարանին մէջ իր այդ խօսելու, պոռալու, կանչելու պատճառով մենք կը կորսնցնենք մեր իրաւունքները: Պէտք է հասկնաք այլեւս: Դուք Հայաստանի մէջ ազատ-ազատ կը խօսիք, մեր տեղը դուք չէք, անոր համար չէք հասկնար մեզ»:

Արամ արքեպիսկոպոս Աթեշեան, որ Պատրիարքական փոխանորդի պաշտօնին է 2010-էն, բազմիցս քննադատութեան ենթարկուած է էրտոզանի կառավարութեան նկատմամբ իր լաւ վերաբերմունքի պատճառով: Երէկ ան պնդած է, որ այդ մէկը կը բխի համայնքի շահերէն: Ըստ հոգեւորականին, 70-հազարանոց հայ համայնքին մէջ իրեն համակրողները քիչ չեն, պարզապէս քննադատներու ձայնը բարձր կը լսուի:

«Ութ տարուան մէջ ոչ մէկը չգրեց, չխօսեցաւ իմ յաջողութիւններու մասին: Ինձ միշտ ըսին, որ «Աթեշեանը էրտոզանի եղբայրն է», այստեղ ձեր թերթերէն մէկ-երկուքը այդպէս գրեցին, ես ալ պատիւ կը գգուեմ, ըսի, եթէ ես մի երկրի նախագահին հետ լաւ եմ, վարչապետին հետ լաւ եմ, նախարարին հետ լաւ եմ, այդ իմ համայնքի շահն է», - յայտարարած է արքեպիսկոպոսը:

Աթեշեանի հասցէին հնչած բռն քննադատութիւններէն լրագրողները յիշած են անոր լրատնի նամակը Թուրքիոյ նախագահին: 2016-ի Յունիսին, երբ գերմանական Պուլտեսթակը ճանչ-

**Նալպանտեան Փարիզի մէջ Հանդիպած է Ֆրանսահայ Համայնքի Ներկայացուցիչներուն Հետ**



Այցով Փարիզ գտնուող Հայաստանի Հանրապետութեան արտաքին գործոց նախարար էտուարտ Նալպանտեան հանդիպում ունեցած է ֆրանսահայ համայնքի ներկայացուցիչներուն հետ:

ՀՀ Արտաքին Գործոց նախարարութեան մամլոյ վարչութեան փոխանցած տեղեկութիւններով՝ հանդիպման ընթացքին էտուարտ Նալպանտեան ներկայացուցած է Ֆրանսա իր այցելութեան նպատակները եւ օրակարգը, հայ-ֆրանսական շարաբերութիւններու յետագայ ամրապնդման ու զարգացման նպատակով ձեռնարկուող քայլերը:

Նախարարը հանգամանալից անդրադարձած է դարաբաղեան հիմնախնդիր խաղող հանգուցալուծման ուղղութեամբ Հայաստանի եւ ԵԱՀԿ Մինսկի խումբի համախաղաղ երկիրներուն կողմէ գործադրուող ջանքերուն, հիմնահարցի կարգաւորման գործընթացի վերջին զարգացումներուն:

էտուարտ Նալպանտեան Ֆրանսայի հայ համայնքի ներկայացուցիչներուն տեղեկացուցած է Հայաստանի եւ Եւրոպական միու-

թեան միջեւ Համապարփակ եւ ընդլայնուած գործընկերութեան համաձայնագիրով նախատեսուած համագործակցութեան հեռանկարներուն մասին:

ԱԳՆ ղեկավարը հանդիպման մասնակիցներուն ծանօթացուցած է միջազգային ու տարածաշրջանային հրատապ խնդիրներուն վերաբերեալ Հայաստանի մօտեցումներուն, Հայաստանի արտաքին քաղաքականութեան առաջնահերթութիւններուն:

էտուարտ Նալպանտեան անդրադարձած է Վիեննայի մէջ կայացած ԵԱՀԿ նախարարական խորհուրդի արդիւնքներուն, Սեւծովեան տնտեսական համագործակցութեան կազմակերպութեան մէջ Հայաստանի նախագահութեան:

Ֆրանսահայ համայնքի ներկայացուցիչներու հետ հանդիպման ընթացքին՝ առանձնապատուկ տեղ յատկացուած էր Երեւանի մէջ յաջող տարի կայանալիք ֆրանսասիւս երկիրներու միջազգային կազմակերպութեան զագաթաժողովի նախապատրաստական աշխատանքներուն:

ցաւ Հայոց ցեղասպանութիւնը, Աթեշեան նամակ յղեց էրտոզանին՝ հայ համայնքի անունով ափսոսանք յայտնելով գերմանացի օրէնսդիրներու որոշման համար: Արքեպիսկոպոս Աթեշեան պնդած է, որ ինք վարուած է այնպէս, ինչպէս նախկին պատրիարքները. - «Չէ, վիրաւորանք չէ [հայ ազգի նկատմամբ], ընդհակառակը՝ ես իմ նախորդներու ճանապարհով քալած եմ, իմ համայնքի շահը ինչ պահանջէ, ես այդպէս պարտաւոր եմ ընել եւ պիտի ընեմ»:

Ամիսներ առաջ «Ազատութեան» հետ զրոյցի ժամանակ Պոլսոյ Հայոց պատրիարքի նախկին փոխանորդը յայտարարած էր, որ անոնք, որոնք համայնքին մէջ կ'ընդվզին իր թեկնածութեան դէմ, «անկիրթներ են»:

Երէկ Աթեշեանին յիշեցուցած են նաեւ այդ մասին, ան ալ հակադարձած է. - «Բառային խաղ մի՛ ընէք, ոչ թէ այն անձինք, որ իմ անձի դէմ են, այլ անոնք, որոնք հոգեւորականին անկիրթ ձեւով կը հայհոյեն»:

«Համայնքը Ձեր դէմ է», - ըսիք, ես ալ ըսի, որ համայնքը իմ դէմ չէ, անկիրթները, որոնք ինձ կը հայհոյեն, անոնք իմ դէմ են», - աւելցուցած է ան:

Յիշեցնենք, որ Պոլսոյ Հայոց պատրիարքի ընտրութեան անհրաժեշտութիւնը առաջացած է այժմ նախկին Պատրիարք Մետրոպոլիտան Գարեգին Գևորգիանի անգործունակ ճանչցուելու պատճառով: Մութաֆեան 2008 թուականին ի վեր ծանր հիւանդ է, եւ անոր ուխտը անցած տարի լուծարուած է:

NATIONAL NOTARY ASSOCIATION NOTARY PUBLIC MEMBER Garine Depoyan 626-755-4773 554 N. Chester Ave Pasadena, Ca. 91106 ghdepoyan@gmail.com

### Ինչու Սերժ Սարգսեանը Մեղմ Գտնուեց ԱԱԾ-ի Դանդեկ

#### ԱՐՄԱՆ ԳԱԼՈՅԵԱՆ

Ազգային անվտանգութեան մարմինների աշխատողի օրուայ առթիւ հանդիսաւոր նիստում Սերժ Սարգսեանի ելոյթն ուշագրաւ էր մի առումով: Ի տարբերութիւն իրաւապահ միւս կառույցներում՝ ոստիկանութիւնում, ՊՆ-ում, քննչական կոմիտէում եւ գլխաւոր դատախազութիւնում ունեցած ելոյթների, որտեղ Սերժ Սարգսեանն ամենախիստ քննադատական խօսքերն էր հնչեցրել՝ վերհանելով համակարգի բացերն ու թերութիւնները, ԱԱԾ-ում, ընդհակառակը, նրա տոնայնութիւնը մեղմ էր ու խօսում էր ձեռքբերումներից: Նկատենք, որ համեմատաբար մեղմ էր Սերժ Սարգսեանի ելոյթը ՀԲԾ-ում, որտեղ եւս կոշտ քննադատութիւնն չհնչեց:

ԱԱԾ-ում անդրադառնալով անգամ ինդրադարոյց թեմաներին՝ Սերժ Սարգսեանն աշխատակիցներին էլ էր կշտամբում, այլ հակառակը: Պատճառն, իհարկէ, պարզ է. պետական կառավարման համակարգում Սերժ Սարգսեանի հիմնական յենարանը եղել եւ մնում է ԱԱԾ-ն, մի կառույց, որն աւելի շատ «մասնագիտացել է» ընդդիմութեան դէմ պայքարում՝ սահմանադրական կարգի պահպանման շրջանակներում, իհարկէ, նաեւ այս կառույցն իր դերակատարութիւնն ունի իշխանութեան ներսում՝ կոմպրոմատների հաւաքագրման առումով: Ու պատահական չէ, որ Սերժ Սարգսեանն էլ իր ելոյթում առանձնապէս կարեւորել էր ԱԱԾ այդ գործառնութիւնը. «ԱԱԾ գործունէութեան մէջ յատկապէս կարեւոր է սահմանադրական կարգի պահպանման ապահովման գործառնութիւնը: Արկածախնդրութիւնն փնտրողները պէտք է քաջ գիտակցեն, որ Հայաստանում պետականութեան հիմքերը խարխիւլու փորձերը դատապարտուած են ձախողման: Հայաստանում բռնութեամբ եւ զէնքով ոչ մի հարց չի լուծուելու: Կասկածից վեր է, որ ազգային անվտանգութեան ծառայութիւնը եւ մեր իրաւապահ միւս մարմիններն ունակ են կանխելու կամ չհզոքացնելու նման ցանկացած ոտնձգութիւն, յայտարարել է Ս. Սարգսեանը, այնուհետեւ լիջել նախորդ տարուայ ամուսնը «Սասնա ծռեր» գինուած խմբաւորման կողմից ոստիկանութեան ՊՊԾ գնդի գրաւման դէպքը, կարծում եմ՝ անցեալ տարի՝ Յուլիսին, ձեռք բերուողական գործողութիւններն ու հաւասարակշիւութեամբ մտայնութիւնները խօսքերիս լաւագոյն ապացոյցն են»:

Միայն թէ, նկատենք, 2016թ. Յուլիսին ոստիկանութեան ՊՊԾ գնդի գրաւումն իրաւապահ համակարգի խարանն է: Այս ընթացքում շատ է խօսուել այն մասին, թէ ինչպէ՞ս կարողացան «Սասնա ծռերը» գնալ այդ քայլին, եթէ մինչ այդ գինուած յեղաշրջման, շէնքեր-շինութիւնները գաւթել նախապատրաստուելու մեղադրանքով ձերբակալուել էր Ժիրայր Սէֆրիլեանը, իսկ նրա կողմնակիցներն էլ գտնուած էին իրաւապահների տեսադաշտում: Ու չնայած այդ հանգամանքին՝

Սէֆրիլեանի կողմնակիցներն, այնուամենայնիւ, կարողացան գնալ գինուած յարձակման՝ ընդ որում, մինչ այդ չթաքցնելով իրենց պլանները, այլ ասուլիսների ժամանակ պարբերաբար նախազգուշացնելով «զէնք վերցնելու» մասին: Իսկ Սերժ Սարգսեանն այս մասին խօսելիս, ընդհակառակը, փորձում է դրական երանգներ հաղորդել:

Սերժ Սարգսեանը նաեւ յայտարարել է, թէ «ԱԱԾ առաջնահերթ խնդիրներից մէկը շարունակում է մնալ հետախուզական եւ հակահետախուզական գործունէութեան արդիւնաւէտութեան բարձրացումը»: Նա նաեւ անդրադարձել է ՀՀ սահմանների պաշտպանութեան խնդրին՝ ասելով. «Վերջին մի քանի տարիների ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ օտարերկրացիների կողմից պետական սահմանն ապօրինի հատելու դէպքերը կամ դրանց փորձերն աւելանում են: Ուստի այս բնագաւառում պէտք է ակտիւացնել համագործակցութիւնը պաշտպանութեան նախարարութեան եւ ոստիկանութեան հետ, վերացնել հնարաւոր այն բացթողումները, որոնց առկայութիւնը կարող է նպաստել ապօրինի սահմանահատմանը»: Այլ կերպ ասած՝ նա թէեւ մատնանշել է սահմանն ապօրինի հատելու դէպքերի մասին, բայց եւ գերադասել է կատարուածի համար չքննադատել այս կառույցին: Չնայած նման դէպքերն անյարիր են եւ պէտք է իսպառ բացառուեն:

Երէկուայ ելոյթում անդրադարձ կար նաեւ հետախուզող անձանց յայտնաբերման խնդրին. «Ձեր ծառայութեան հետ իրաւապահ միւս մարմինների ակտիւ համագործակցութեան արդիւնքում վերջին շրջանում բացայայտուել են տարբեր ոլորտային յանցագործութիւններ, կանխուել զէնքի եւ զինամթերքի ապօրինի շրջանառութեան դէպքեր եւ փորձեր, յայտնաբերուել են քրէական պատասխանատուութիւնից խուսափող, հետեւապէս եւ հասարակութեան համար վտանգ ներկայացնող մի շարք անձինք»: Միայն թէ, յիշում էք, նոյն այդ խնդրի մասին ոստիկանութիւնում խօսելիս Ս. Սարգսեանը «շան լափ էր լցրել»՝ շեշտելով, որ տարիներ շարունակ հետախուզողները չեն յայտնաբերում, դեռ աւելին՝ նոր յանցագործութիւններ են անում: Այնինչ՝ ԱԱԾ-ում հետախուզողների յայտնաբերման մասին խօսելիս, ընդհակառակը, շեշտել է բացայայտումները՝ տպաւորութիւն ստեղծելով, թէ դրականն ԱԱԾ-ի շնորհիւ է, բացասականը՝ ոստիկանութեան թերացումների: Միզուցել եւ իրօք այդպէս է. ամէն դէպքում՝ ԱԱԾ աշխատանքները հասկանալի պատճառներով ամբողջութեամբ թափանցիկ չեն, լայնօրէն չեն լուսաբանուում, այլ պահոււմ են գաղտնիութեան քողի տակ: Այդքանից յետոյ, թերեւս, հետաքրքիր է՝ արդե՞ք ոստիկանութիւնում խանդով չեն վերաբերում կատարուածին:

«ԺՈՂՈՎՈՒՐԴ»

### Հարցազրոյց Իրենք Չեն Հասկանում Պրիմիտիւ Մի Բան, Որ Մի Օր Իրենք Են Լինելու Մեղադրուողի Կարգավիճակում

ՌՈՋԱ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ  
Lragir.am-ի գուցակիցն է փաստաբան Հայկ Ալումեանը

- Պարոն Ալումեան, Ազգային ժողովն առաջին ընթացքում քննուցեց Դատական օրենսգրքի նախագիծը, որով դատաւորներին իրաւունք է տրուում մինչեւ 100 հազար դրամ սանկցիա կիրառել փաստաբանների նկատմամբ: Ինչպէ՞ս էք վերաբերում այս փոփոխութեանը:

- Ես կարծում եմ, որ 100 հազար դրամը շատ է, եթէ դա լինէր 50 հազար դրամ՝ աւելի արդար ու ճիշտ կը լինէր: Բայց այն, որ որոշ դէպքեր են լինում, երբ դատարանները ստիպուած են լինում սանկցիաներ կիրառել, դա իհարկէ այդպէս է: Եթէ չիշում էք, նախկինում Քրէական օրէնսգրքում համապատասխան յօդուած կար, որը ճանաչուեց հակասահմանադրական, եւ որոշակի չափով բաց առաջացաւ: Երեւի այս օրէնքը միտուած է այդ բացը լրացնելուն: Պարզապէս տուգանքի չափը պէտք է վերանայել: Դա մեծ չափ է, Քրէական օրէնսգրքով նախատեսուած յանցագործութիւններ կան, որ անգամ այդպիսի պատիժ չեն նախատեսում, աւելի մեղմ պատիժ են սահմանում:

- Դա կարո՞ղ է առիթ դառնալ, որպէսզի դատաւորները կամայական որոշումներ կայացնեն, փորձեն լռեցնել փաստաբաններին:

- Եթէ դատաւորը կիրառի նման սանկցիա, փաստաբանը կը կարողանայ բողոքարկել: Այդ 100



հազար դրամն ամենաձայրայեղ դրսեւորման համար է նախատեսուած: Դուք պատկերացրէք, թէ այդ ինչ պէտք է անի փաստաբանը, որ ստանալ ամենաբարձր սանկցիան: Իսկ մնացած դրսեւորումները, որոնք մենք յաճախակի տեսնում ենք, դրանց դէպքում, իհարկէ, 100 հազար դրամ տուգանք հնարաւոր չէ կիրառել: Եթէ այնուամենայնիւ, դատաւորները տուգանեն, թէկուզ փոքր չափով, ապա այդ որոշումը պէտք է ենթակալ լինի բողոքարկման: Վերաքննիչ դատարանը միշտ չէ, որ առաջին ատեանի դատարանի որոշումը թողնում է անփոփոխ:

Ինչ վերաբերում է փաստաբաններին լռեցնելու փորձերին, այդ փորձերը կան: Եւ նման փորձերը միշտ ձախողուել են եւ ապագայում էլ կը ձախողուեն: Նախկինում Քրէական օրէնսգրքում կար

Շար.ը էջ 19

**GARNI**

**Nourish your hair with natural products**

www.GarniUSA.com  
Pasadena, CA 91102, USA

**SYRIAN ARMENIAN RELIEF FUND**

**Save Support Sustain**

Syrian Armenian Relief Fund  
P.O. Box 1948  
Glendale, CA 91209-1948

www.syrianarmenianreliefund.org

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱԼԱ ԵՐԵԿՈՅԻՆ 3.6 ՄԻԼԻՈՆ ՏՈԼԱՐ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԱԾ



Հայաստանի մանուկներ հիմնադրամի (COAF) 14-րդ ամենամեայ դրամահաշվարկային ընթացքին հանգանակուած է 3.6 միլիոն ԱՄՆ տոլար: Հանգանակուած ամբողջ հասոցի վրա պիտի ծառայի Հայաստանի մանուկներ հիմնադրամի կրթական, առողջապահական, ընկերային եւ տնտեսական ծրագրերուն՝ յատուկ շեշտ դնելով SMART նախաձեռնութեան վրայ:

Նիւ Եորքի ամենամեծ բարեգործական միջոցառման ներկայ եղած են արուեստի աշխարհի մէջ համաշխարհային հռչակ վայելող թոնի Շաֆրազեան, «Էմմի» եւ «Թոնի» մրցանակներու դափնեկիր, դերասանուհի Անտրէա Մաթին, ձեւաւորող Մայքլ Արամ, խոհարար ձեֆի Ջաքարեան, դերասանուհի եւ երգչուհի Վանեսա Ուիլիամս:

«COAF-ի մարդասիրական մրցանակ»ը շնորհուած է «Էմմի» մրցանակի դափնեկիր, հագուստի ձեւաւորող Պաթրիսիա: Ֆիլաբ, որ հայկական եւ յունական արմատներ ունի, Հայաստանի մանուկներ հիմնադրամի վաղեմի աջակիցն է, կը

քաջալերէ մարդոց իրացնել իրենց ամբողջ ներուժը, ըլլալ իւրօրինակ ու հասնիլ անհատական կատարելութեան:

Երեկոյի յատուկ հիւրերն էին Հայաստանէն ժամանած երաժիշտներ 14-ամեայ սաքսոֆոնահար Ալեքսանտր Աւետիսեանը եւ 9-ամեայ վոքալիստ Անի Մարգարեանը: Կալա-ընթրիքին մասնակիցները հնարաւորութիւն ունեցած են ունկնդրելու լեռնագողի (Արմաւիր) 16-ամեայ Նարէ Գալստեանին: Ան վառ գոյներով պատմած է, թէ ինչպէս COAF-ը յաջողած է փոխել իր կեանքը:

Աշխարհահռչակ հանգանակիչ Սայմըն տէ Պիլերին աշխուժութիւն ապահոված է իր վարած աճուրդի ամբողջ ընթացքին: Ներկայացուած են COAF-ի առաքելութեան նուիրաբերուած արուեստի եզակի գործեր՝ յայտնի արուեստագէտներ էտ Ռուշայի, Ռիչարտ Փրինսի, Քենի Սքարֆի եւ Պատրիկ Տեմար-շելիէի կողմէն: Աճուրդին վաճառուած է նաեւ հայ-ամերիկեան աշխարհահռչակ արձակագիր Ուիլիամ Սարոյեանի գործերէն մէկը:

### ՃՐԱԳԱԼՈՅՑԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ՍՐԲՈՑ ԴԵՒՈՆԴԵԱՆՑ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՋ

ՀՀ բնապահպանութեան նախարարութիւնը ՀՀ կառավարութեան 2018 թվականի գերակայ խնդիրների շրջանակներում նախատեսում է իրականացնել մետաղական օգտակար հանածոների արդիւնահանման արդիւնքում գոյացած ընդերք օգտագործման թափոնների, լքուած/տիրագուրկ արտադրական լցակոյտերի եւ փակուած օբյեկտների վերաբերեալ տեղեկատուական բազայի ստեղծում: Տեղեկատուութեան վերլուծութեան հիման վրայ նախատեսուած է մշակել շրջակայ միջավայրի աղտոտուածութեան կանխման/նուազեցման միջոցառումների իրականացման անհրաժեշտութեան վերաբերեալ առաջարկութիւններ եւ ներկայացնել ՀՀ կառավարութիւնը:

Համոզուած ենք, որ այս պատասխանը կարգալուց յետոյ հաստատ մոռացած կը լինէք, թէ ինչ էինք մենք առաջարկել ՀՀ կառավարութեանը: Յիշեցնենք, որ մենք ընդամէնը առաջարկել էինք երկու լքուած հանքավայրերից դուրս եկող աղտոտուած ջրերը վնասագերծելու ծրագրեր մշակել եւ իրականացնել, մաքրել աղտոտուած հողերն ու կատարել ռեկուլտիւացիա:

Արդէն մօտ երեք տասնեակ նմանատիպ «հանճարեղ» պատասխաններ ունենք ստացած տարբեր լիազօր մարմիններից վերջին 6 տարուայ ընթացքում: Սակայն կայ մի ակնյայտ «առաջընթաց»՝ եթէ նախկինում ուղղակի խուսափում էին հստակ պատասխաններ տալուց, ապա հիմա տարբեր օրէնքների եւ իրաւական ակտերի կէտերին յղումներ անելով փորձ է արւում արդարացնել բնապահպանական ոլորտում ՀՀ կառավարութեան տարիներ շարունակ ցուցաբերած յանցաւոր անգործութիւնը:

Կառավարութիւնում կարող են հանգիստ խղճով շարունակել օրէնքներ եւ որոշումներ գրել, յանձնարարականներ եւ առաջարկութիւններ անել, քանի որ այդ թվում հարոյց ջրերն ու աղտոտուած հողերը իրենց տներից դեռ հեռու են: Բայց թող չիշեն, որ նման մտածողութեամբ շարունակելու եւ նորանոր հանքերի շահագործման թոյլտուութիւններ բաժանելու արդիւնքում՝ այդ ուղտը մի օր էլ իրենց սեփական դռանն է չոքելու:

# INNOVATIVE

## Designs Manufacturing, Inc.

idmifurnishings.com

# «ԲԱՐՁՐԵԱԼՆ Է, ՈՐ ՈՒԺ ԿՈՒ ՏԱՅ ՄԵՉԻ» ՉԱՐՑԱԶՐՈՅՑԸ FLY ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴԻՐ ԳԱՐՈՒՆ ՍԱՄՈՒԷԼԵԱՆԻ ՀԵՏ

## ՍԱԳՕ ԱՐԵԱՆ

Երեք կարճ բառերով ամրացուած է FLY կազմակերպութեան անունը, որ բացի մարդասիրական աշխատանքներ իրականացնելէ, մարդկային առաքելութեան հաւատացող խումբ մը մարդոց մէկտեղումով սկիզբ առած նախաձեռնութիւնն է: FLY-ը, որ բառացիորէն՝ Freedom Loving Youth նախադասութեան առաջին սկզբնատառերու ամփոփումն է, հիմնադրուած է ամերիկահայ Գարոն Գուգուեան-Սամուէլեանի ճիգերով:

Բարերար հայուհին վերջերս կը գտնուէր Երեւան, ուր հանդիպում մը ունեցանք անոր: Հարցազրոյց մը տալով՝ ան խօսեցաւ կազմակերպութեան առաքելութեան եւ ցարդ իրականացուցած ծրագիրներուն մասին:

- Տիկին Գուգուեան ձեր ճիգերով հիմնադրուած FLY կազմակերպութիւնը մարդասիրական կարեւոր աշխատանքներ կ'իրականացնէ Հայաստանի եւ Սուրիոյ մէջ: Ինչպէ՞ս սկիզբ առաւ ձեր գործունէութիւնը եւ ի՞նչ նպատակներով հիմնեցիք FLY-ը:

- FLY-ը սկիզբ առաւ Սուրիոյ պատերազմի ժամանակ, երբ Դամասկոսի թեմի առաջնորդ Տ. Արմաշ Եպսկ. Նալպանտեան Դամասկոսի հայ ընտանիքներուն օգնելու նպատակով, դրամահաւաք կազմակերպելու համար Ամերիկա այցելեց: Այդ ընթացքին առիթ եղաւ տեսնել սրբազանը եւ վերանորոգել մեր քսանհինգ տարի առաջ եղած դպրոցական տարիներու մտերմութիւնը: Անկէ ետք սրբազանին հետ միասին մէկուկէս տարի շարունակ միասին աշխատանքներ տարինք օժանդակելու համար Սուրիոյ ծանր պատերազմէն տուժած՝ Դամասկոսի, Հալպի, Քեսապի, Գամիշլիի, Հասիչէի (Հասաքէ), Տէրիքի եւ Տէր Զօրի մէջ գտնուող կարիքաւոր հայ ընտանիքներուն եւ մինչեւ օրս կրցանք օգնել 3 հազար երեխաներու: Սրբազանը ամէն անգամ նկարներ եւ ժապաւէններ կը դրկէր ինձի, որոնց միջոցաւ կը տեսնէի մեր հայրենակիցներուն ուրախութիւնը իրենց ստացած նուէրներուն կապակցութեամբ: Այսպէս ամէն ամիս ինչ որ կրնայի ինչպէ՛ս, կը տրամադրէի եւ կը դրկէի Սուրիա:

Երբ FLY-ը սկսաւ իր գործունէութեան, օգնողներու խմբակ մը չունէինք: Աշխատանք տանողները

քիչ էին, ես, աղջիկս՝ Ալինան, Արմաշ Սրբազանը եւ Արմենակ Վարդապետը (Պետրոսեան): Շատ մեծ ուրախութիւն կ'ապրէի, երբ կ'իմանայի, որ ինձմէ շատ հեռու, պատերազմական քաղաքի մը մէջ, փոքրիկ հրեշտակներու ուրախութիւն կը պատճառեմ: Որոշ ժամանակ անց, որոշեցի այդ ուրախութիւնս կիսել ժողովուրդի հետ եւ դիմատետրի վրայ սկսայ մեր կատարած աշխատանքներուն մասին լուսանկարներ եւ տեսանիւթեր հրատարակել: Այդ ընթացքին Սրբազանը առաջարկեց կազմակերպութեան վերածել այս փոքր ծրագիրը եւ նուիրատուներ ունենալ: Սկիզբը շատ քաջալերուած էի այս գաղափարով, որովհետեւ ես չեմ վարժուած մարդոցմէ բան մը խնդրելու, ես վարժուած եմ միայն տալու, նուիրելու: Բայց Սրբազանը համոզեց զիս ըսելով. «Մտածէ այն ընտանիքներուն եւ երեխաներուն մասին, որոնց պիտի կարենանք օգնել»: Այսպէսով, Մայիս 2013-ին, սկսանք աշխատիլ որպէս կազմակերպութիւն եւ ունեցանք մեր գաղափարախօսութիւնը՝ օգնել տկար, անապահով երեխաներուն եւ դրամական օգնութիւն չտալ, այլ ապահովել ընտանիքներուն եւ երեխաներուն կարիքները: Այսպիսով, ինչպէս քիչ առաջ նշեցի, Սուրիոյ մէջ 3 հազար երեխայի օգնեցինք եւ հասանք մինչեւ Տէր Զօր:

- Ձեր մօտ ինչպէ՞ս յառաջացաւ մարդոց կեանքը բարելաւելու, օգնելու, աջակցելու ցանկութիւնը:

- Վստահ եմ նման զգացումն ու ցանկութիւնը մարդու մէջ մէկ անգամէն չի յառաջանալ: Փոքր տարիքէս այդ բարի կամքը ունեցած եմ եւ մարդոց օգնելու սերմը իմ մէջ մեծմայրս դրած է: Մեծմայրս հաւատացեալ եղած է եւ իր աղօթքները եւ խօսքերը լսելով դաստիարակուած եմ: Ես Հալպի ծնած եմ եւ մինչեւ տասներեք տարեկանս հոն ապրած եմ: Շատ լաւ կը չիշեմ Հալպի փողոցները եւ շուկաները: Երբ մօրս հետ շուկայ կ'երթայի եւ չքաւոր մը կը տեսնէի, անպայման մօրս պայուսակէն բան մը պիտի տայի այդ մարդուն: Փոքր տարիքէս ուզած եմ օգտակար ըլլալ, ոչ միայն աղքատ, դրամ չունեցող մարդոց, այլեւ նաեւ տկար մարդոց:

Ուրիշ հանգամանք մը եւս կայ: Ես ընտանիքիս ամենափոքր զաւակն եմ, ինձմէ մեծ երկու եղբայր եւ մէկ քոյր ունիմ: Ինձմէ 11 տարի մեծ եղբայրս մահացած



է 22 տարի առաջ: Ան 10 տարի տառապած է ընկճախտէ: Երբ եղբայրս հիւանդացաւ, ես տակաւին երեխայ էի՝ 11 տարեկան: Ձէի հասկնար ինչու ան միշտ տխուր էր, բայց միշտ քովը կը մնայի, կ'օգնէի իրեն, յատկապէս մեր Ամերիկա ապրած երեք տարիներուն: Ան Հալպի մահացաւ եւ իր մահը շատ ազդեց վրաս: Երբեք երանի բառը չեմ գործածած, սակայն երբ եղբայրս մահացաւ ըսի. «Երանի ես Յակոբին մեծ քոյրը ըլլալի, որպէսզի կարենայի իրեն աւելի օգնել»:

Այսօր, ինչ որ կը կատարեմ, եղբօրս՝ Յակոբին յիշատակին համար է, որ կը կատարեմ: Եղբայրս երեխաները շատ կը սիրէր եւ միշտ զինք շրջապատող երեխաները ուրախացնել կ'ուզէր: Ես ալ ուզեցի անօգնական, տկար, հիւանդ երեխաներուն յոյսը ըլլալ եւ օգնութեան ձեռք մեկնել: Այն օգնութիւնը, որ ես չկրցայ եղբօրս ցուցաբերել, կ'ուզեմ ուրիշին տալ, մանաւանդ երեխաներուն: Անշուշտ երբ հիւանդ մը կամ ծեր մը տեսնեմ, նոյնպէս կ'ազդուիմ, սակայն երեխաներու պարագան ուրիշ է, որովհետեւ անոնք անօգնական են եւ իրենց կեանքը տակաւին չեն ապրած, այս պատճառով ալ սիրտս իրենց հետ է:

- Ե՞րբ սկսաք գործունէութիւնը ընդհանուր Հայաստանի մէջ: Ինչպէ՞ս սկսաք եւ քանի՞ երեխայի կամ ընտանիքի օգնած էք մինչ օրս:

- Օգոստոս 2016-ին Արցախի ապրիլեան պատերազմի ժամանակ մենք Հայաստան եկանք: Մեր նպատակը պատերազմի ընթացքին գոհուած զինուորներու ընտանիքներուն եւ երեխաներուն օգնելն էր, բայց երբեք չէի պատկերացներ,

որ ուրիշ, աւելի ծանր, աւելի կարիքաւոր ընտանիքներ ալ կան Հայաստանի մէջ: Ձէի պատկերացներ, որ Հայաստանի մէջ կան երեխաներ, որոնք անօթի կը քնանան, կամ հացէ, գետնախնձորէ եւ բրինձէ զատ ուրիշ ուտելիք չեն գտներ: Այս պատճառով ալ, անցեալ տարի Յունիսին մէկ շաբաթով Հայաստան եկանք, ուսումնասիրելու համար, թէ որո՞ւ եւ ինչպէ՞ս պէտք է օգնենք: Այդ ժամանակ որոշեցինք օգնութեան ձեռք մեկնել որբանոցները ապրող եւ հաշմանդամ երեխաներուն: Այս ընթացքին մեր վրայ աւիւք նաեւ տակաւին չմկրտուած երեխաները կնքելու առաքելութիւնը:

Երբ Ամերիկա վերադարձանք, դրամահաւաք կազմակերպեցինք յատուկ Հայաստանի երեխաներուն համար: Մինչ այդ, Օգոստոսին, սրբազանը Հայաստան եկած էր եւ օգնութիւններ տարած՝ Կիւմրիի երեխաներուն: Նոյնմբերին վերսկսանք մեր գործունէութիւնը՝ նուէրներ եւ օգնութիւններ տալով Դիլիջանի մէջ մէկ եւ Կիւմրիի մէջ եղող երեք մանկատուններու: Իւրաքանչիւր մանկատան մէջ 90-120 երեխայ կար: Բացի մանկատուներէն, այցելեցինք եւ օգնութեան ձեռք մեկնեցինք Կիւմրիի մէջ՝ 13 եւ Էջմիածինի մէջ 30 երեխաներու: Այսպիսով երեք շաբաթուայ ընթացքին 600 երեխայի օգնեցինք, անոնց, մանկատան խնդրանքին համաձայն, տանելով ձեռնային հագուստներ, սաւան, վերմակ, եւ եւայլն: Հայաստանի մէջ համագործակցեցանք Շիրակի թեմի առաջնորդ Տ. Միքայէլ Եպսկ.

Շար.ը էջ 19



**MARONIAN**  
INSURANCE SERVICES

Since 1975, we have proudly served our community's insurance needs.

CA Insurance Lic. #0C99815



**WELCOME HOME & AUTO INSURANCE**

Along with all of our other *Trusted Insurance Services*






We will shop you with over 20 A-rated companies to find the best fit for your needs and budget.

CALL US FOR A PERSONALIZED QUOTE

**(818) 500 9305**

### ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԽՕՍՈՒՆ ՎԿԱՆԵՐԸ. ՔԱՐԱՇԱՄԲԻ ՔԱՌԱՍՈՒՆԴԱՐԵԱՅ ԳԱԲԱԹԸ



Հայաստանի պատմութեան թանգարանում պահուող շուրջ 400 000 առարկայից բաղկացած ազգային հաւաքածուի 35 տոկոսը հնագիտական իրեր են՝ պեղուած Հայաստանի տարածքից: Դրանց թւում բրոնզեդարեան փայտեայ կառքեր են, ցեղային առաջնորդների դամբարաններից պեղուած ծիսական օջախներ եւ պատվանդաններ, կաւանօթներ, թրծակաւէ եւ պրոնզէ քանդակներ, գէնքեր, զարդեր, սպասք, բազմաֆիգուր սիւժետային տեսարաններով դրուագուած գաւաթներ ու գօտիներ, որոնք խօսուեն վկայութիւններ են պարունակում նախնիների պաշտամունքի, տիեզերական պատկերացումների, արեւի, ջրի եւ պտղաբերութեան գաղափարը խորհրդանշող հաւատալիքների մասին:

«Արմենպրես»-ը նոր նախագիծ է սկսում, որտեղ ներկայացնելու է Հայաստանի պատմութեան թանգարանում պահուող բացառիկ գտածոները եւ դրանց պատմութիւնը: Շարքը կը սկսենք 10 ամենահետաքրքիր գաւաթներից, ապա կ'անցնենք թրերի պատմութեանը: Քարաշամբի քառասունդարեայ գաւաթը, որի վրայ մի ամբողջ առասպել կայ պատկերուած:

Հայաստանի պատմութեան թանգարանի հնագիտական հաւաքածուի մէջ իր ուրոյն տեղն ունի աւելի քան քառասունդարեայ հնութեան մի գաւաթ, որը 1987 թուականին յայտնաբերել է հնագէտ Վահան Յովհաննիսեանը՝ Կոտայքի մարզի Քարաշամբ գիւղում պեղումների ժամանակ: «Արմենպրես»-ի հետ գրոյցում Հայաստանի պատմութեան թանգարանի հնագիտութեան բաժնի աւագ գիտաշխատող Զուլիետտա Կարապետեանն ասաց, որ արծաթէ դրուագագարդ գաւաթը յայտնաբերուել է «արքայական» դամբարանում բազմաթիւ այլ թանկարժէք իրերի հետ միասին: Այն հին արեւելեան պատկերագրութեան անկրկնելի նմուշ է եւ բացառիկ նշանակութիւն ունի միջին բրոնզեդարեան Հայաստանի հոգեւոր եւ նիւթական մշակոյթի մասին պատկերացում կազմելու հարցում: «Այն վկայում է տեղաբնիկների մետաղի մշակման եւ կիրառական արուեստում ունեցած բացառիկ առաջընթացի մասին: Գաւաթի առկայութիւնն ապացուցում է, որ տարածաշրջանը

լուրջ արտադրական եւ մշակութային կեդրոն է եղել եւ սերտ կապեր է ունեցել խեթական աշխարհի եւ Միջագետքի կեդրոնների հետ», - ասաց նա:

Գաւաթը, սակայն, սովորական չէ, իրանին արուած վեց հորիզոնական դրուագագարդ գօտիների վրայ ներկայացուած է հնագոյն հնդեւրոպական առասպելական սիւժէ. պատկերուած է վարագի որսի, երկու ցեղերի միջեւ ծագած գժտութեան, մարտի եւ պարտուած կողմի առաջնորդների մահապատժի պատմութիւնը: Այդ սիւժէն կապուած է հնդեւրոպական դիցաբանական պատկերացումների հետ եւ խօսում է միջին պրոնզի դարում Հայաստանի եւ Հարաւային Կովկասի տարածքում բնակուող ժողովրդի հնդեւրոպական ծագման մասին: «Քարաշամբի գաւաթն ամենահին յուշարձանն է, որը պատկերագրութեան լեզուով վերոյիշեալ պատումը մեզ է հասցրել ամբողջական տեսքով», - նշեց նա:

Զուլիետտա Կարապետեանը պատմեց, որ Քարաշամբի գաւաթն իր հնագիտական արժէքի հետ մէկտեղ կիրառական արուեստի եզակի նմուշ է: Ընդամենը 13 սմ բարձրութեամբ գաւաթի վրայ հմուտ վարպետը կարողացել է առասպելը ներկայացնել բոլոր մանրամասներով եւ իր ժամանակի համար բացառիկ վարպետութեամբ՝ համաչափ, արտայայտիչ եւ կենդանի պատկերներով: Գաւաթի վրայ ամենայն մանրամասնութեամբ պատկերուած են 25 մարդկային, 36 կենդանու եւ 60-ից աւելի տարբեր առարկաների պատկերներ՝ միջինում 3 սմ բարձրութեամբ», - ասաց թանգարանի հնագիտութեան բաժնի աւագ գիտաշխատողը:

Քարաշամբի գաւաթը ցուցադրուել է աշխարհի տարբեր թանգարաններում, մասնաւորապէս Նիւ Եորքի Մետրոպոլիտեն Արուեստի թանգարանում, Մոսկուայի Ռուսաստանի պատմութեան թանգարանում, Ֆրանսայում՝ Նանտի Դոբրէ թանգարանում, Լիոնի Գալլո - ռոմանական քաղաքակրթութեան, Առլի Արուեստի թանգարաններում, Բուդապէշտում՝ Կարոլի Միհայի պալատում, Թեհրանում՝ Իրանի ազգային թանգարանում եւ այլուր:

### ԳԱԼԻՖՈՐՆԻՈՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԵԾԱԳՈՅՆ ՀՐԴԵՅԻ ԴԻՑԱԶՆ ՀՐՇԷՋԻ ՅՈՒՂԱՐԿԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Տակաւին շարունակուող Գալիֆորնիոյ անտառային հրդեհները իրենց հսակայական աւերները կը գործեն բնապահպանման տեսակէտէն ինչպէս նաեւ ահաւոր վնասներ պատճառելով աւելի քան 1,105 քառ. քիլոմետր տարածութեամբ (273,000 ակր) շրջաններու: Հրդեհի պատճառով մահացած է մէկ անձ եւ փճացուցած 1073 կառուցուածք, մասնաւորաբար Վէնթուրա եւ Սանթա Պարպարա գաւառներուն մէջ: Գալիֆորնիոյ անտառային եւ հրդեհային պաշտպանութեան բաժանմունքին համաձայն յառաջացած հրդեհներուն 65 առ հարիւրը սանձուած է:

Վերոյիշեալ սարսափազդու հրդեհին զոհ գնաց դիւցազն 32 ամեայ Սան Տիեկօ գաւառի հրշէջ Գորի Այվըրսըն, Ֆիլմորի շրջանին մէջ:

Հանգուցեալի թաղման փառաշուք յուղարկաւորութիւնը տեղի ունեցաւ Շաբաթ օր, Փոյինթ Լոմայի Ռաք եկեղեցիին մէջ յորուն ներկայ գտնուեցաւ 1800 հոգի:

Իր այրին Աշլին, որ ունի աղջնակ մը եւ յղի է, ըսաւ թէ մտահոգ էի իր կեանքի ապահովութեամբ եւ միաժամանակ գիտէի նաեւ որ պիտի կարենայ օգտակար հանդիսանալ եւ տարբերութիւն մը տալ ուրիշներուն: «Իմ սիրելի ամուսինս այս աշխարհէն կը հեռանայ ոչ թէ որպէս հերոս, այլ որպէս դիւցազն («Սիւբըրհիօ»): Ուստի չափօր սիրելիս ես կ'երգնում, որ դուն հպարտ ես այլեւս, իսկ ես ստրուկ մը չեմ որ վախնամ»:

Իր դամբանականին մէջ Սան Տիեկոյի հրշէջ գունդի պետ Թոնի Միչըմն ըսաւ թէ տակաւին շատ կանուխ էր թողմաս կոչուող հրդեհի զոհ Գորի Այվըրսընի յուշարձանը կառուցանելու մասին: Սակայն կայ նախնական այն գաղափարը որ կուգայ Այվըրսընի բնութեան հանդէպ ունեցած սէրէն: Ատիկա իր յիշատակին նուիրուած արահետի մը կառուցումն է, որպէս զի ապագայ լեռնագնաց հրշէջները իմանան այս պարտականութեան մէջ հերոսի նուիրուածութեան մասին:

Կ'ըսուի թէ Այվըրսըն մահացած է իր ստացած այրուածքներուն եւ ծուխ ներշնչելուն պատճառով: Սակայն բուն մանրամասնութիւնները տակաւին անծանօթ կը մնան: Կը սպասուի հետաքննութեան լրիւ աւարտին յայտնեց Միչըմնը:



թեան լրիւ աւարտին յայտնեց Միչըմնը:

Այվըրսըն իր ետին կը ձգէ ոչ միայն իր ընտանիքը այլեւ էս-գօնտիսօ բնակող իր ծնողներն ու մօրաքոյրները, հօրեղբայրներն ու զարմիկները:

Ընտանիքի բարեկամ մը Go Fund Me անունով հանգանակային էջ մը բացած է, որմէ գոյացած է 600,000 տոլար, բայց կը նպատակադէ այդ գումարը հասցնլ մէկ միլիոնի:

Երկուք ու կէս ժամ տեւող յուղարկաւորութեան իրենց մասնակցութիւնը բերին 40 տարբեր միաւորներու անդամներ: Հրշէջ երկու երկարաձիգ սանդուխներէն կախուած էր մեծաղիւր ամերիկեան դրօշը եկեղեցուց մուտքին: Իսկ այրին Աշլին, իր դուստրին ձեռքէն բնուած հետեւեցաւ դագաղին մեռելակառքէն դուրս բերուած դագաղին, շնորհակալութիւն յայտնելով յուղարկաւորներուն: Այնուհետեւ դագաղը եկեղեցի առաջնորդուեցաւ դրօշակակիրներով, պատուոյ պահակներով թմբուկ եւ պարկապոզիկ նուագողներով: Այստեղ, Ռաք եկեղեցուց հովիւ Մայլս Մըր Ֆըրսընն ըսաւ թէ Այվըրսընի ընտանիքը ցանկութիւն յայտնած է որ արարողութիւնն ըլլայ տօնախմբութիւն մը ոգեկոչելու իր կեանքը:

«Մենք հոս եկած ենք ոչ թէ ինկած հերոս մը գովաբանելու, այլ յարուցեալ հերոս մը տօնախմբելու» ըսաւ եկեղեցուց հոգեւոր հովիւը:

San Diego Union Tribune

[www.massisweekly.com](http://www.massisweekly.com)  
Updated every Frida

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**  
**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ**

---

Yes, I wish to subscribe to Massis Weekly  
Enclosed a check for (one year)  
\* \$50,00 \* \$100,00 (first class) for USA  
\$ 125,00 (Air Mail) for Canada.  
\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----  
Address: -----  
City: ----- State: ----- Zip Code: -----  
Country: -----  
Tel: ----- Email: -----



## ԻՆՉ ԿԸ ՆՇԱՆԱԿԷ ՍԻՐԵԼ ԻՆՔՆ ԻՐ ԱՆՁԸ. ԵՍԱՍԻՐՈՒԹԻՒՆ, ԹԵ...

Ենթադրույթի կազմում, որ մարդ որքան շատ սիրելի ինքզինք, այնքան քիչ կը սիրել ուրիշները, որ սէրը սեփական անձի նկատմամբ «եսասիրութիւն» է: Երբ մարդը կը սիրէ իր ընտանիքի անդամները, բաց ռիչինչ կը զգայ «օտար» ներքին նկատմամբ, ատրիկ կը դիտուի իբրեւ սիրելու անկարողութեան նշան:

Սեփական կեանքին մէջ հաստատուելը, սեփական երջանկութիւն հաստատելը, զարգացումը հիմնուած են սիրելու ընդունակութեան վրայ: Եթէ անհատը ընդունակ է արդիւնաւէտ սիրուի, ան կը սիրէ նաեւ ինքզինք, եթէ ընդունակ է սիրել միայն ուրիշները, ան ընդունակ չէ սիրել ընդհանրապէս:

Եթէ մարդը կը սիրէ զինք շրջապատողները եւ հոգ կը տանի անոնց, ուստի անոր սէրը ինքն իր հանդէպ ոչ մէկ կապ ունի եսասիրութեան հետ. Անոր համար շատ դիւրին է ու բնական սիրել ինչպէս ինքզինք, այնպէս ալ ուրիշները: Սիրոյ զգացումները քեզի եւ ու-

րիշներու հանդէպ փոխկապակցուած են: Ուրիշներու հանդէպ սէրը կը հարստանայ եւ լիարժէք կը դառնայ, եթէ մարդը ինքզինքն սիրելու փորձ ունի, եւ հակառակը: Եսասիրութիւնը եւ սէրը սեփական անձի հանդէպ ոչ միայն նոյնական են, այլեւ աւելին՝ հակադիր: Եսասէրը ինքզինք չափազանց քիչ կը սիրէ, քան չափազանց շատ, իրականութեան մէջ ան կ'ատէ ինքզինք: Ան դժբախտ է եւ տենդագին կերպով կը ձգտի քաղել կեանքէն այն բարիքները, որոնց մուտքը ինքը փակած է: Կը թուի, թէ ան ինքն իրեն չափազանց շատ կը հոգայ, բայց իրականութեան մէջ ան ընդամենը անյաջող փորձեր կ'ընէ լրացնելու իր «ես»-ի հոգատարութեան պակասը: Ճիշդ է, որ եսասէրը ընդունակ չէ ուրիշները սիրել, բայց ան ընդունակ չէ նաեւ ինքզինք սիրել: Յիշեցէք, երբ դուք կը սիրէք դուք ձեզ, ձեր ներքին աշխարհը կը լուսաւորուի, արտաքին աշխարհն ալ՝ վարակուելով ձեր հոգիի լոյսէն, կը դառնայ աւելի պայծառ ու հրաշալի:

## ՅԱՋՈՂՈՒԹԵԱՆ, ՍԻՐՈՅ ԵՒ ԵՐՋԱՆԿՈՒԹԵԱՆ ԲԱՆԱՁԵՐԸ

Ինչէ՞ն կազմուած է յաջողութեան, սիրոյ եւ երջանկութեան բանաձեւը:

\* Դրական մտքերէ- Յաջողութիւնը նախ եւ առաջ կազմուած է դրական մտքերէն: Եթէ դուք տրամադրուած էք անյաջողութեան կամ ամէն ինչ կ'ընէք պարտուելու համար, ի հարկէ, կը պարտուիք: Հաւատացէ՛ք յաջողութեան, մտածեցէ՛ք յաջողութեան մասին եւ դուք պիտի ունենաք զայն:

\* Ճիշդ գործողութիւններէ ու մտադրութիւններէ- Եթէ դուք բացասական կը մտածէք, ուստի ձեր մտադրութիւններն ու գործողութիւններն ալ բացասական պիտի ըլլան: Պէտք է հասկնալ, որ մենք

կը կերտենք մեր ներկան ու ապագան:

\* Յոյզերէ- Սիրոյ «կարգաւորումը» բաղկացած է յոյզերէ: Ստիպեցէ՛ք ձեր ուղեղին աւելի յաճախ մտածել սիրոյ, երջանկութեան եւ ուրախութեան մասին, եւ պիտի տեսնէք գործնականի մէջ ուղեղին հնարաւորութիւնները: Չէ՞ որ եթէ դուք ձեզ չօգնէք, ոչ ոք կ'օգնէ ձեզ:

\* Յանկութենէ, նպատակներէ եւ երազանքէ- Երազանքներով ապրող մարդիկ հնարաւոր ամէն բան կ'ընեն գայն իրականացնելու եւ ցանկալին ձեռք բերելու համար: Նախ պէտք է սորվիլ գնահատել այն ինչ ունիք, իսկ յետոյ ձգտիք նոր նպատակներու եւ ցանկութիւններու իրականացման:

## ԻՆՉՈ՞՞ ԵՐԲԵՄ ԱՌԱԲԵԼԱԳՈՅՆ ԱՐԴԻՒՆՔԻ ՀԱՍՆԵԼՈՒ ԶԳՏՈՒՄԸ ՎՆԱՍԱԿԱՐ Է

Հետազոտողները կատարելապաշտները բաժնած են 3 տեսակի եւ բնութագրած են անոնցմէ իւրաքանչիւրը: Պարզուած է, որ ամէն ինչի մէջ լաւագոյնը ըլլալու ձգտումը կրնայ բացասաբար անդրադառնալ ինչպէս մարդու, այնպէս ալ գայն շրջապատող մարդոց վրայ:

Բոլոր կատարելապաշտները կարելի է բաժնել 3 տեսակի. ինքնակեդրոնացած՝ մարդիկ, որոնք իրենք իրենց հանդէպ բարձր պահանջներ կը ներկայացնեն եւ կը ձգտին ամէն ինչի մէջ լաւագոյնը ըլլալ բացառապէս ինքնակատարելագործման համար:

Շրջապատի վրայ կեդրոնացած կատարելապաշտներ՝ մարդիկ, որոնք կը փորձեն կատարելալ ըլլալ իրենց շրջապատին համար

եւ վերջապէս՝ կատարելապաշտներ, որոնք բարձր պահանջներ կը ներկայացնեն դիմացինին այլ ոչ թէ իրենք իրենց:

Գիտնականները պարզած են, որ առաջին տեսակի կատարելապաշտները շփման մէջ ամենահաճելի մարդիկ են. անոնք կը մտածեն դիմացինի մասին, ուշադիր են քաղաքավարութեան կանոններուն, միշտ պատրաստ են օգնելու, լսելու գրուցակիցը: Իսկ անոնք, որոնք կը ձգտին կատարելալ ըլլալ շրջապատին համար, սովորաբար ցած ինքնագնահատականով ինքնամիտ մարդիկ են: Իսկ 3-րդ տիպի կատարելապաշտները աւելի շատ բացասական յոյզեր կը յառաջացնեն մարդոց մօտ: Անոնք կը տառապին ինքնասիրահարուածութեամբ ու գոռոզութեամբ:

## ՈՍԿԷ ՄԻՏՔԵՐ, ՈՐՈՆՔ ԿՕԳՆԵՆ ԱԲԵԼԻ ԼԱՒ ՀԱՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՐԴՈՅ ՀԵՏ

1. Ժամանակի ընթացքին դուք պիտի հասկնա, որ կեանքի մէջ իւրաքանչիւր հանդիպում ունի իր նպատակը: Որոշ մարդիկ պիտի փորձեն քեզ, միւսները պիտի օգտագործեն, իսկ ոմանք ալ պիտի սորվեցնեն: Եւ որ ամենակարեւորն է՝ պիտի ըլլան մարդիկ, որ մէջդ պիտի արթնցնեն լաւագոյնը:

2. Կողքիդ պահէ այն մարդիկը, որոնք իսկապէս կը սիրեն քեզ, կը քաջալերեն, կը բարձրացնեն ու կ'երջանկացնեն: Եթէ գիտես այնպիսի մարդիկ, որ նշուածներէն ոչ մէկը կ'ընեն, ուրեմն հեռացէք անոնցմէ:

3. Սէրը կապ չունի ոչ սեռային յարաբերութիւններու, ոչ ճոխ ժամադրութիւններու եւ ոչ ալ դուք քեզ ցոյց տալու հետ: Սէրը՝ ըլլալն է այն մարդու հետ, որ քեզ կ'երջանկացնէ այնպէս, ինչպէս ուրիշ ոչ ոք:

4. Յաճախ մենք կը թերագնահատենք հպումներու, ժպիտներու, բարի խօսքերու, լսելու, անկեղծ հաճոյախօսութիւններու եւ մտահոգութեան փոքրիկ քայլերու նշանակութիւնը, որոնցմէ իւրաքանչիւրը կեանքը գլխիվայր շրջելու կարողութիւն ունի:

5. Ամենագեղեցիկ բանը տեսնելն է, թէ ինչպէս կը ժպտայ ան, գոր կը սիրես եւ որ աւելի գեղեցիկ է, երբ գիտես, որ դուք ես այդ ժպիտին պատճառը:



6. Յարաբերութիւններդ մտածուած ընտրէ: Աւելի լաւ է միայնակ ըլլալ, քան վատ ընկերակցութիւն ունենալ:

7. Սիրահարուիր, երբ պատրաստ ես, ոչ թէ երբ միտակ ես:

8. Իրական երջանկութիւնը ներսէն կու գայ եւ ոչ թէ ուրիշէն: Երբեք չսխալիս՝ սպասելով որեւէ մէկուն կամ որեւէ բանի, որ պիտի երջանկացնէ քեզ:


9. Մի՛ ընտրել մէկը, որ գեղեցիկ է աշխարհի համար, ընտրէ՛ մէկը, որ գեղեցիկ կը դարձնէ աշխարհը քեզի համար:

10. Լաւ յարաբերութիւնները պարզապէս չեն պատահիր, անոնք ժամանակ կը պահանջեն, համբերութիւն եւ ջանք երկու մարդու, որոնք իսկապէս կը փափաքին միասին աշխատիլ:

Պատրաստեց՝ ՆԱՐԻՆԷ Ն.

## ՄՐՏԻ ԿԱԹՈՒԱԾԻ 6 ՆԱԽԱՆՇԱՆՆԵՐ ՈՐՈՆՔ Ի ՅԱՅՏ ԿՈՒ ԳԱՆ ՄԻԱՅՆ ԿԻՆԵՐՈՒ ՄՕՏ

Սրտի կաթուածը վաղաժամ մահուան հիմնական պատճառներէն է: Աւաղ, անիկա կու գայ շատ աննկատ: Սակայն, մինչ աչդ, մարմինը մեզի կ'ողորկէ նախանշաններ, գորս կարելի է արհամարհել: Ընդհանուր նախանշաններ, որոնք կը յուշեն գալիք սրտի կաթուածին մասին:



- Յաւ մէջքի, պարանոցի, ծնօտի եւ ձեռքերու շրջանին: Այս նախանշանները լայն տարածուած են կիններուն մօտ: Անոնք յաճախ շփոթմունքի մէջ կը դնեն կինները, որովհետեւ սրտի կաթուածը առաջին հերթին կը նոյնացուի կրծքավանդակի կամ ձախ ձեռքի ցաւերուն հետ: Յաւ կրնայ ըլլալ սաստկացող, նուազող կամ սուր, յանկարծակի: Այդ իսկ պատճառով, ամէն անսովոր նախանշանի պարագային պէտք է պարտադիր ստու գոռմ անցնել:

- Ծակոց ստամոքսի մէջ, սրտխառնոց: Գալիք սրտի կաթուածին նախանշանը կարելի է խառնել սովորական թունաւորման, կոհիփի կամ ալրոցի նախանշաններու հետ: Երբեմն կինները ճնշում կը զգան որովայնի հատուածին մէջ:

- Պաղ քրտինք: Պաղ քրտինքը շատ տարածուած նախանշան է կիններուն մօտ: Հիւանդներուն կը թուի, որ անիկա կապուած է ճնշախտի կամ ապրումներու հետ: Սակայն, եթէ ձեր մօտ առաջ չէին եղած աչդպիսի նշաններ, դուք պէտք է դիմէք մասնագետի:

- Ճնշում եւ ցաւ կրծքավանդակի հատուածին: Յաւ կրծքավանդակի շուրջ, անյարմարութեան նշաններ, ալրոց, ծանրութեան զգացողութիւն, բոլոր այս նշանները ի յատ կու գան անկախ անհատի սեռէն: Սակայն, որոշ կանայք կ'ունենան ցաւային

զգացողութիւն ոչ թէ ձեռքի ձախ կողմէն, այլ ամբողջ մակերեսով: Եթէ ցաւը կամ ճնշումը չ'անցնիր քանի մը վայրկեանի ընթացքին, պէտք է պարտադիր հեռաձայնել բժիշկի:

- Դժուարացած շնչառութիւն, գլխապտոյտ: Շնչառութեան հետ խնդիրները առանց պատճառի՝ սրտի կաթուածի նախանշան են, առաւել եւս այն պարագային, երբ կը նկատուին այլ նախանշաններու հետ:

- Յոգնածութեան բարձր աստիճան: Եթէ նոյնիսկ երկարատեւ հանգիստէ ետք դուք յոգնածութիւն կը զգաք եւ չէք կրնար ընել սովորական գործողութիւններ, ուրեմն ատրիկ անհանգստացնող նշան է:

- Դիմացկունութեան տկարացումը նոյնպէս կրնայ անհանգստացնող նշան ըլլալ: Եթէ, օրինակ, դուք արդէն դժուարութեամբ կը բարձրանաք մէկ յարկ, մինչ առաջ դիւրութեամբ կը յաղթահարէիք նոյնիսկ 5 յարկը, ուստի ատրիկա առիթ է անհանգստանալու սիրտանօթային համակարգի առողջութեան մասին:

- Այս նշանները չեն երաշխաւորեր պարտադիր սրտի կաթուած: Սակայն, անոնց հանրագումարը, ինչպէս նաեւ նոյն նշաններու յաճախակի կրկնութիւնը արդէն լուրջ առիթ է մասնագետին դիմելու:

### ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ԱՐԵԳԱԿԸ

«Արեւելի հետ՝ թող, որ անձկացած սիրտս թափանցի  
Եւ արդարութեան արեգակը քո...»


Գրիգոր Նարեկացի

«Սփիւռք...Միշտ ծանոթ, բայց եւ հանելուկ ու անակնկալ, միշտ գուարթ, կենսասեր, ապահով ու անհոգ, բայց եւ տխուր, ինքնամփոփ ու հալածական, միշտ խօսքաշէն, սրամիտ, ծիծաղկոտ, բայց եւ փիլիսոփա ու իմաստուն: Եւ միշտ՝ արտացոլանքը երկրի բնաւորութեան, ճակատագրի եւ յոյսերի: Առանց սփիւռքի անկատար է հայ բնաւորութեան խճանկարը եւ Սփիւռքով է, որ լրանում, դառնում ենք մի հող, մի ճակատագիր, մի էութիւն»:

Վարդգէս Պետրոսեան

### ՍՈՆԱ ՏԻԳՐԱՆԵԱՆ

Լրացաւ Վարդգէս Պետրոսեանի ծննդեան 85- ամեակը: Սփիւռքում, Լոս-Անճելոսում, Միացեալ Նահանգների Արեւմտեան թեմի Բարեխնամ առաջնորդ Գերաշնորհ Տէր Յովնան արքեպիսկոպոս Տէրտէրեանի բարձր հովանաւորութեամբ եւ Գալիֆորնիայի Հայ Գրողների Միութեան նախաձեռնութեամբ ս/թ Դեկտեմբերի 4- ին ԱՄՆ Հայոց Արեւմտեան թեմի առաջնորդարանում տեղի ունեցաւ մեծ գրողի մեծարման երեկոն: Սրահը լեփլեցուն էր: Գրողի արուեստի երկրպագուներից շատերը նախասրահից էին հետեւում դահլիճում կատարուող հանդիսութեանը, որ սկսուեց տերուական աղօթքով:



Ուղղակի առնչութիւն գրողի հետ եւ նրա կատարած թէ՛ գրական թէ՛ մարդկային եւ հասարակական- քաղաքական գործունէութեանը վերաբերյալ: Անհաղորդ հանդիսատես չկար: Երեկոյի ջերմ, յուզիչ մթնոլորտը աւելի պայծառ եւ անմիջական դարձրին հրաշալի, տաղանդաւոր երգիչներ Արթուր Յակոբեանը եւ մեր բոլոր ուրախ, նաեւ ձախ ու ձախորդ օրերի ընկեր ու բարեկամ, ինձ համար բոլոր ժամանակների իր ժանրում լավագույն երգիչ Յարութ Փամբուկչեանը:

Երեկոն բացեց Գալիֆորնիայի Հայ Գրողների միութեան նախագահ Հենրիկ Անասեանը, որ նաեւ պատմեց իր յուշերից մէկը, խօսքը սկսելով այսպէս. «Թէ ինչպէս Վարդգէս Պետրոսեանը փրկեց պատիւս...»:

Հիմնական բանախօս ակադեմիկոս Արտեմ Սարգսեանը հանդէս եկաւ գեղեցիկ եւ բովանդակալից գնահատանքի խօսքով: Ջերմ ելույթ ունեցան բանաստեղծ Գարուհի Հարեանցը, «Համայնապատկեր» պարբերականի խմբագիր Սարո Գրիգորեանը, արձակագիր Կիմա Կիրակոսեանը: Այնուհետեւ հանդէս եկան «Սփիւռք» երգչախումբի շնորհալի տիկնայք- երիտասարդ կատարողներ, դաշնակահար, հարգարժան պրոֆեսոր Լեւոն Աբրահամեանը: Երկրպագուներից մէկը կարգաց հատուած «Հայկական էպիգրամներ» անգլոգրական գրքից:

Գնահատանքի խօսքով հանդէս եկաւ սրբազան՝ Գերաշնորհ Տէր Յովնան արքեպիսկոպոս Տէրտէրեանը, ով Վարդգէս Պետրոսեանին ձանաչում էր դեռ իր երիտասարդ տարիներից եւ իրաւամբ մեծ գրողին անուանեց «Յաւերժի ճամբորդ...»: Անշուշտ ներկայ էր գրողի մեծ ընտանիքը: Երեկոն աւարտուեց աղօթքով եւ մարդիկ այնուհետեւ շարունակեցին յուզմունքով իրենց շատուած խօսքերն ու զգացմունքները յայտնել միմեանց մի գաւաթ գինու շուրջը:

Դահլիճում գտնուողները անմասն չմնացին: Գնահատանքի եւ ափսոսանքի խօսքեր ասուեցին եւ յիշողութիւններ պատմեցին ուղղակի դահլիճից, անպայման ցանկանալով անմիջական մասնակիցը լինել եւ յայտնել իրենց սրտի խօսքը մեծ գրողին եւ մարդուն: Ներկաների մէջ կային մարդիկ, գրողի ծննդավայր Աշտարակից, որ աւարտին մոտեցան եւ իրենց շնորհակալութիւնը յայտնեցին, ցանկացան, որ Պետրոսեան ընտանիքը իմանայ այն մարդկանց մասին, որոնց դժուար պահին ձեռք է մեկնել, հարազատի պէս օգնել է իրենց հայրենակից մեծ մարդը, գրողը, հայրենասէր, մարդասէր, բարի- կամեցող Վարդգէս Պետրոսեանը:

Իսկայայտ չատ ջերմ, շա՛տ անկեղծ գեղեցիկ երեկոյ էր, անմոռանալի, շատ յատկանշական այդ դահլիճում: Յանկանում եմ իմ շնորհակալութիւնը յայտնել բոլոր- բոլորն՝ հովանաւորին, կազմակերպիչներին: Ովքեր դահլիճում էին, ովքեր դահլիճում չէին, բայց գործով ու հոգով մեզ հետ էին... Շնորհակալ եմ բոլոր հայկական թերթերին եւ հեռուստակաեաններին, որ լրատվութիւն եւ յօդուածներ տպագրեցին եւ հեռարձակեցին նուիրուած Վարդգէս Պետրոսեանին: Այո, անարգար էր այսպիսի պայծառ մարդու, մտաւորականի կորուստը: Որքան տարբեր կը լինէր մեր կեանքը, եթէ մի հրաշքով Վարդգէս Պետրոսեանը շարունակեր ապրել եւ ստեղծագործել: Արեւշատութիւն ամենքիս եւ թող, որ ամէն արեւելի հետ մի օր մեր անձկալի սիրտը թափանցի եւ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ արեգակը:

Ես իհարկէ գիտեմ հարիւրաւոր մարդկանց, ընտանիքներ, որոնք օրհնանքով են յիշում Վարդգէսին, սակայն ոչ բոլորին: Որովհետեւ Վարդգէսը դա անում էր լուռ, առանց ցուցադրելու, երբեմն պարզապէս գաղտնի՝ աւելորդ ուշադրութիւնից խուսափելու համար:

Բոլորը ասելիք ունեին եւ

### «ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ԹՈՒՐԲԻՈՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ԿԱՌՈՅՑՈՆՉԱՑՆՈՂ ՊԱՏՄԱԿԱՆ ՓԱՍՏ Է».

### Կ'ԸՍԷ ԹԱՆԵՐ ԱՔՉԱՍ



Թուրքիոյ իշխանութիւնները պարտաւոր են առերեսուելու սեփական պատմութեան հետ, եթէ կ'ուզեն հիմնել ժողովրդավարական եւ մարդու իրաւունքները յարգող համակարգ:

Առանց պատմութեան հետ առերեսման՝ հասարակական խաղաղութիւն չի կրնար հաստատուիլ եւ ժողովրդավարական համակարգ չի կրնար հիմնուիլ: Այս մասին «T24.com»-ի մէջ հրատարակած նոր յօդուածով մը գրած է Հայոց Յեղասպանութիւնը ճանչցած թուրք պատմաբան Թաներ Աքչամ:

անցեալին, այնպէս ալ պիտի կառուցէք այսօր: Եթէ պատմութեան մէջ առկայ խնդիրները քննարկէք՝ ըսելով «հայերը դաւաճանած են», «քիւրտերը կայսերականներու խաղը կը խաղան», «ասոնք երկիրը բաժնելու գող դաւաճաններ են եւ մեր երկրի համար լուրջ վտանգ կը ներկայացնեն», ուստի ներկայիս ալ նման հարցերը այդ տեսանկիւնէն պիտի ընկալուին: Ինչպէս նախապէս խախտած էք ամենահիմնարար իրաւունքները, այսօր ալ նոյնը կ'ընէք», նշած է Աքչամ:

«Պատմութեան առերեսուելու պարտաւորութիւնը եւ անոր դիմաց առկայ արգելքները» խորագիրով յօդուածին մէջ Աքչամ ընդգծած է, որ ներկայիս Թուրքիոյ մէջ մենատիրական եւ բռնապետական վարչաձեւ է, կ'ոտնահարուին մարդու ամենահիմնարար իրաւունքներն ու ազատութիւնները, գլխաւորապէս՝ մտքի ազատութիւնը: «Հարիւրաւոր մտաւորականներ, գրողներ, լրագրողներ բանտարկուած են, ժողովրդավարութեան ամենահիմնական կառույցներն ու օրէնքները չեն գործեր, դատական համակարգը ամբողջութեամբ մէկ մարդու ազդեցութեան տակ է, օրէնքի գերակայութեան սկզբունքը վերացած է: Յեղային-կրօնական խնդիրները, մասնաւորապէս քրտական հարցը, ալեւի, քրիստոնեայ եւ հրեայ փոքրամասնութիւններուն հարցերը հիւանդագին վիճակի մէջ են», նշած է պատմաբանը:

Իբրեւ երկրորդ պատճառ՝ պատմաբանը ընդգծած է, որ պատմութեան ընթացքին վատ եւ ցաւալի յարաբերութիւններ ունեցող հասարակութիւնները կը կարենան համատեղ ապրիլ միայն մէկը միւսին հետ խօսելու ճանապարհով: Երրորդը՝ անհրաժեշտ է անցեալին ոչնչացուած մարդոց մարդկային արժանապատուութիւնը, որ ոտնատակ եղած է, վերադարձնել անոնց: Եւ վերջապէս, իբրեւ չորրորդ պատճառ, Աքչամ նշած է՝ պատմութեան հետ առերեսումէն հրաժարուած վատ հետեւանք ներկրայ ունենալ: Առերեսում հերքելը կը նշանակէ ունենալ նոյն յանցանքը կրկնելու ներուժը:

Ան առանձնացուցած է պատմութեան առերեսուելու չորս հիմնական պատճառ: «Առաջինը, եթէ կ'ուզէք մարդու իրաւունքները յարգող ժողովրդավարական վարչաձեւ ունենալ, ուստի ստիպուած էք առերեսուիլ պատմութեան ընթացքին մարդու իրաւունքներու խախտումներուն հետ: Եթէ անցեալի խախտումներուն հետ չկրնաք առերեսուիլ, այսօր չէք կրնար մարդու իրաւունքները յարգող հասարակութիւն հիմնել: Ինչպէս նախք

Խօսելով Հայոց Յեղասպանութեան մասին՝ Աքչամ գրած է. «Մենք 1923 թուականին ազգ-պետութիւն հիմնեցինք եւ անոր համապատասխան ինքնութիւն ստեղծեցինք: Եւ այդ ինքնութիւնը այսօր վերածուած է մեր մտածելակերպը, զգացմունքները, այսինքն՝ հասարակութեան ամբողջ հասարակական-մշակութային յարաբերութիւնները որոշող իրականութեան: Սակայն եթէ մենք, օրինակ, սկսինք խօսիլ Հայոց Յեղասպանութեան մասին, պիտի տեսնենք, թէ ինչպէս այդ իրականութիւնը կը սկսի խախտուիլ: Հայոց Յեղասպանութիւնը Թուրքիոյ հասարակութեան ինքնութեան կառույցը ամբողջութեամբ ոչնչացնող պատմական փաստ է: Այս պատճառով է, որ կը խուսափինք առերեսումէն»:

**SEROP'S CAFE**  
GREEK & LEBANESE FOOD  
SERVING BATON ROUGE SINCE 1979

## Իրենք Չեն Զասկանում Պրիմիտի Մի Բան

Շարունակուած էջ 7-էն

յօղուած, որը նախատեսուած էր քրէական պատասխանատուութիւն փաստաբանների կողմից դատաբանների նկատմամբ անյարգալից վերաբերմունքի համար: Բայց այն փաստաբանը, ով լուրջ էր, այդպէս էլ չլուց: Որ փաստաբանը լուր է, նոյնիսկ եթէ խրախուսեն էլ նրա համարձակ գործողութիւնները, էլի ինքը լուր է մնալու:

- Եթէ ամփոփենք 2017 թուականը, ինչպիսի՞նք էր այն փաստաբանների համար, բազմիցս ահազանգեր եղան, որ փաստաբանների իրաւունքների խախտումը զանգուածային բնոյթ է կրել այս տարի:

- Այս տարի լայնածաւալ յարձակում սկսուեց փաստաբանների եւ նրանց իրաւունքների նկատմամբ: Աննախադէպ քանակի կարգապահական վարոյթներ են յարուցուել փաստաբանների նկատմամբ, հաւանաբար աւելի շատ, քան նախորդ բոլոր տարիներին միասին վերցուած: Բացի այդ, փորձ է կատարուել ծայրայեղ աստիճանի նուստացնել փաստաբաններին եւ իրենց մասնագիտութիւնը: Հնարաւոր չէ մասնագիտական առումով փաստաբանին աւելի ծանր վիրաւորանք հասցնել, քան իր ներկայութեամբ իր պաշտպանեալներին ծեծելը: Մենք այս տարի «Սասնա ծռերի» գործով նման դէպքի ահանատես եղանք դատարանի շէնքում: Յետոյ, մենք հիմա տեսնում ենք դատավարութիւններ, որտեղ մի ուրիշ խայտառակ դրսեւորում է ի յայտ եկել, երբ մի հանրային պաշտպանը չի գալիս դատական նիստի, մի ուրիշ հանրային պաշտպան յայտարարում է, որ ինքը լիազօրուած է փոխարինել բացակայ պաշտպանին: Սա նշանակում է փաստաբանի մասնագիտութիւնը գործազնեւել, փաստաբանների դերը վերածել ուղղակի կապիտուլթեան: Հնարաւոր չէ մարդուն պաշտպանել, եթէ իր հետ նախապէս չես քննարկել գործն ու չես մշակել անելիքները: Դա կար Շիրիսանեանի գործով, հիմա էլ կայ, այլ գործերով կայ: Հենց միայն դրա համար անհրաժեշտ է յարուցել կարգապահական վարոյթ:

- Ինչո՞ւ է նման քաղաքականութիւն վարուում իշխանութիւնների կողմից:

- Փաստաբանները մարդու իրաւունքների պաշտպանութեան առաջին գծում են յայտնուել: Եւ այն գործիչները, ովքեր ենթադրում են, թէ իրենք միշտ լինելու են մեղադրողների ու մարդու իրաւունքները խախտողի դերում, - խօսքը միայն մեղադրող դատախազների մասին չէ, այլ նաեւ նրանց, ովքեր իշխանութիւն ունեն, իրենք ուզում են դիմադրութեան վերջին օճախները ոչնչացնել, - իրենց թուում է, որ այդպէս ամէն ինչ լաւ կը լինի եւ իրենք կարող են աւելի անպատեփելի ձեւով անել այն, ինչ անում են: Իրենք ուղղակի չեն հասկանում շատ պրիմիտիւ մի բան, որ մի օր իրենք լինելու են մեղադրողի կարգավիճակում՝ վաղ թէ ուշ: Եթէ հիմիկուանից փաստաբանների իրաւունքները փոքրացնում են, գործիքակազմը գնալով պակասեցնում են, իրենք չեն հասկանում, որ երբ վաղը հերթը հասնի իրենց պաշտպանելուն, մենք էլի բարեխղճօրէն կ'աշխատենք, բայց ինչքանով հնարաւորութիւն կ'ունենանք իրենց ստեղծած այս դաշտում գործել, դա հարց է:

«ԼՐԱԳԻՐ»

## «ԲԱՐՁՐԵԱԼՆ Է, ՈՐ ՈՒԺ ԿՈՒ ՏԱՅ ՄԵՋԻ»

Շարունակուած էջ 15-էն

Աջապահեանին եւ Շիրակի թեմի Ընկերային-կրթական կեդրոնին հետ: Այսօր Հայաստանի մէջ մեզի հետ կ'աշխատին Կիւմրի առաջնորդարանէն ներս աշխատող երեք օրիորդներ, որոնք մեր Հայաստան չեղած ամիսներուն կը շարունակեն մեր կազմակերպութեան առաքելութիւնը: Ըսեմ նաեւ, որ մենք անհատական օգնութիւններ կատարած ենք այն անձերուն, որոնք նամակ գրած եւ օգնութիւն խնդրած են մեր կազմակերպութեան:

Նկատեցինք նաեւ, որ մանկատունները միշտ ալ օգնութիւններ կը ստանան տարբեր կազմակերպութիւններու միջոցաւ, սակայն տնակներու մէջ ապրող միայնակ մայրերը եւ իրենց գաւակները լքուած են եւ ոչ մէկ օգնութիւն կը ստանան ու կ'ապրին շատ թշուառ կեանքով: Յաւր պիտէք ուր է, որ տնակներու մէջ ապրող մարդիկ աղքատ չեն եղած: Երկրաշարժի հետեւանքով յայտնուած են այնտեղ եւ արմատապէս փոխուած է իրենց կեանքը: Հակառակ իրենց ծանր կեանքին, շատ հաւատացեալ են: Տուն մը չկայ ուր սրբապատկեր մը չըլլայ: Անոնք միշտ կ'աղօթեն եւ կ'առաջնորդուին Աստուծոյ խօսքերով:

Ուստի որոշեցինք տնակներուն մէջ ապրող ընտանիքներուն օգնել եւ մեր աղջիկները սկսան այդ ուղղութեամբ աշխատիլ: Այցելեցինք տնակներու մէջ ապրող ընտանիքներուն, հարցազրոյցներ կատարեցինք իրենց հետ եւ իմացանք իւրաքանչիւրին կարիքները: Այսպիսով, մեր այս այցելութեան ընթացքին օգնեցինք քսան ընտանիքի: Բացի օգնութիւն տրամադրելէ, նաեւ փորձած ենք ուրախացնել փոքրիկները: Առաջին անգամ երեխաները «պոնջիկանոց» (պոնջիկը Հայաստանի մէջ ընդհանրացած քաղցրապատառ մըն է) տարինք, Նոյեմբերին Նոր տարի տօնեցինք բոլորս միասին, իսկ այս անգամ 54 երեխայի համար պտոյտ մը կազմակերպեցինք դէպի Վանաձորի ճամբար: Երեխաները հոն խաղացին, զուարճացան եւ նոր վայր մը տեսան: Շատերու համար մեծ իրադարձութիւն մըն էր, որովհետեւ առաջին անգամ ըլլալով հանրակառք կը նստէին եւ ուրիշ վայր մը կ'երթային: Ուզեցի գնահատել նաեւ տնակներու մէջ ապրող մայրերը, ուստի որոշեցինք մայրերու տօն նշել: Միայն շուկայի գացինք եւ անոնց նոր հագուստներ գնեցինք, յաջորդ օրը գացին վարսապարզարի, մատնայարդարի եւ դիմապարզարի քով, եւ այդ օրը, անոնց չմկրտուած երեխաները կնքեցինք եւ ետքը խնջոյք մը կազմակերպեցինք: Այդ օրը 22 երեխայ եւ երկու մայր կնքուեցան: Իսկ Նոյեմբերին (2016) 123 հաշմանդամ երեխաներ կնքուեցան: Ասոնք այն փոքրիկներն էին, որոնց ծնողները հրաժարած էին իրենցմէ:

- Դուք Հայաստանի մէջ կ'այցելեք ամենաթշուառ վիճակի մէջ գտնուող ընտանիքներուն: Այն նկարները եւ տեսանկիւնները, որոնք կը հրապարակեք, շատ ազդեցիկ են: Ի՞նչ զգացումներով դեմ յանդիման կը գտնուիք, երբ նման ծանր մարդկային վիճակներու ակամատես կը դառնաք:

- Բարձրեանքն է, որ ուժ կու տայ մեզի: Ես նոր վերադարձած եմ Կիւմրիէն եւ երեք շաբաթ հոն

այդ մարդոց հետ էի ամբողջ օրը: Ես ստիպուած եմ ուժեղ ըլլալ. այդ մարդոց պէտք է ուժ տամ՝ ապրելու եւ նոր կեանքի սկսելու համար:

- Կ'ուզեմ հարցնել նուիրատուութեան մասին: Ի՞նչ միջոցներով նուիրատուութիւններ կը հաւաքեք: Գիշը է, որ դուք ալ կարելորտ կոսս մը կը նուիրաբերեք, բայց ամերիկահայեր ալ կա՞ն այս գործի մէջ:

- Դրամահաւաքի նպատակով ձեռնարկ մը, կամ պարահանդէս մը կը կազմակերպենք: Մինչեւ այսօր միայն մէկ պարահանդէս կազմակերպած ենք՝ 2015-ի Դեկտեմբերին, իսկ 2016 թուականի Սեպտեմբերին ալ Mission Armenia խորագրով հաւաք մը կազմակերպեցինք: Բացի այդ, աղջիկս՝ Ալինան FLY Youth team-ի պատասխանատուն է եւ ինքն ալ այդ ուղղութեամբ կը փորձէ երիտասարդները ներգրաւել այս գործին մէջ: Թերեւս շատ մեծ, երեւակայելի գումարներ չենք հաւաքեր, բայց մինչ օրս կարելիութիւն ունեցած ենք աւելի քան 4 հազար ընտանիքի հասնելու, օգնութեան ձեռք մեկնելու:

Ի՞նչ երազս է ստեղծել համացանցին վրայ նուիրատուներու յատուկ ցանց, ուր փափաքողները համացանցի միջոցաւ գումար փոխանցեն: Յուսամ օր մը կը հասնիմ նպատակիս:

- Ի՞նչ է ամերիկահայ համայնքի վերաբերմունքը ձեր իրականացուցած օրագրերուն կապակցութեամբ: Գիտե՞ք, որ բաւական մեծ ու խճանկարային համայնք մը ունիմք: Ի՞նչ կրնաք ըսել այդ առումով:

- Ամերիկայի մէջ կը գործեն մեծ թիւով հայկական կազմակերպութիւններ: Մենք երբ որպէս կազմակերպութիւն առաջին անգամ հանդէս եկանք, մեզ շրջապատողները մեր մտերիմներն էին, բարեկամները, ընկերները: Այսպիսով առաջին պարահանդէսին 270 անձ հաւաքուեցաւ: Իւրաքանչիւր պարահանդէսի կամ ձեռնարկի ժամանակ նկարներով եւ ժապաւէններով ցոյց կու տանք մեր կատարած աշխատանքը, որովհետեւ իրենք ալ իւրաւունք ունին իմանալ, թէ իրենց նուիրատուութիւնը ինչի ծառայած է: Վերջին երկու տարիներուն, արդէն ամերիկահայերու մեծամասնութիւնը կը ճանչնայ FLY-ը եւ անոր կատարած գործունէութիւնը:

- Ի՞նչ օրագիրներ ճախատեսած էք յառաջիկային համար:

- Ի՞նչ ցանկութիւնս է օգնել Կիւմրի բնակող մեծ թիւով ընտանիքներու, որովհետեւ այնտեղ օգնութեան կարիք ունեցողներուն թիւը շատ մեծ է: Անշուշտ եղած են ընտանիքներ, որոնց երկու անգամ օգնած ենք, սակայն կ'ուզեմ նոր ընտանիքներու ալ հասնիլ, չեմ ուզեր անօգնական անտեսուած ընտանիք մը մնայ: Ծատ կը փափաքեմ բոլորին հասնիլ միաժամանակ, սակայն մեր նիւթական կարելիութիւններն ալ սահմանափակ են եւ դժուար է ցանկութիւնս իրականացնել:

Նշեմ, որ բացի նիւթական օգնութիւններէն, մենք այս ընտանիքներուն կու տանք նոր յոյս, նոր լոյս, եւ ուժ, որպէսզի կարենան իրենց մոլթ կեանքէն դուրս գալ եւ ապրիլ կառչելով կեանքի լուսաւոր կողմերուն:

«ԺԱՄԱՆԱԿ» Պոլիս

## ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՏԻՐԱԿԱՆ ՁԱՅՆԸ

Շարունակուած էջ 13-էն

պահպանութեան»: Ասոնք, նորընտիր Հայրապետին շուրջ եւ Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի համախոհ, պատրաստեցին Հայրապետական «Ձեկուցում» կրճատեալ անունին ներքեւ մանրամասն թղթածրար մը Հայ Եկեղեցուց բարեկարգութեան հարցին վերաբերեալ, աշխատանք մը որուն անպայման անդրադառնալու են մեր օրեայ բարեկարգիչները: Հայրապետը զայն յանձնեց Երուսաղէմի Թորգոմ Գուշակեան Պատրիարքին առ ի քննութիւն, որ իր կարգին ամենախղճամիտ աշխատանքով վերլուծեց ամէն հարց իր խոհուն տաննեակ մը խմբագրականներով՝ «ՍԻՌՆ» ամսագրին մէջ: Սա ինքնին արդէն մեծ յաջողութիւն

մը եղաւ Խորհն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի անունին հետ կապուած, եւ Երուսաղէմի Թորգոմ Գուշակեան Պատրիարքի անխնջ աշխատանքին որպէս լրացուցիչ եզրայանգում, հակառակ Մայր Աթոռը շրջապատող քաղաքական աննպաստ պայմաններուն:

Հուսկ ուրեմն, Գուշակեան Թորգոմ Պատրիարք իր խօսքը կը կնքէր էջմիածնի հանդէպ անխառն սիրով եւ պաշտելութեամբ, երբ կը փակէր իր խմբագրականը այսպէս: «Էջմիածին սուրբ եւ փարելի տեսիլ, գոր հայրութեան հոգևոյն մէջ ընդ միշտ եւ խորագոյնս տպաւորեց մեր հոգիներուն լուսատու մեր Հայրը, ազգ ու ժողովուրդ ամէնքս նորէն ոտքի կեցած ենք երգելու համար Միշտ անշարժ պահեալ Աթոռ Հայկազնեայս»:

KANAN REAL ESTATE CO. S.A.R.L - BEIRUT, LEBANON  
Providing services in buying/selling properties in Lebanon (including services in governmental and private sectors).  
Contact Info.: Mr. Anania Kastanian - Tel No.: +961-70-849068 (kanan310@yahoo.com) - Dbayeh, St. Rita Bldg.

Ձեր Ծանուցումները Վստահեցեք  
«Մասիս» Շաբաթաթերթին  
T: (626) 797-7680 massis2@earthlink.net

ՍԱՐՁԱԿԱՆ

Հայաստանի Տասը Լաւագոյն Մարզիկների Անունները Յայտնի են



Երեւանի DoubleTree Hilton հիւրանոցում աւարտուեց Հայաստանի Հանրապետութեան «Տարուայ 10 լաւագոյն մարզիկներ» 2017 թուականի մրցոյթի քուէարկութիւնը:

Հաւատարմագրուած 23 մարզական լրագրողների քուէարկութեան եւ ժողովրդի SMS քուէարկութեամբ հիմամբ ՀՀ սպորտի եւ երիտասարդութեան հարցերի նախարարութեան կողմից ստեղծուած յատուկ յանձնաժողովի հաշուարկից յետոյ Հայաստանի Հանրապետութեան «Տարուայ 10 լաւագոյն մարզիկներ» 2017 թուականի մրցոյթի յաղթողներ ճանաչուեցին հետեւեալ մարզիկները. Հենրիխ Մխիթարեան, Արթուր Ալեքսանեան, Լեւոն Արոնեան, Գրիգոր Մխիթարեան, Մաքսիմ Մանուկեան, Յովհաննէս Բաչկով, Սիմոն Մարտիրոսեան, Լեւան Բերիանիձէ, Էդգար Ստեփանեան, Արթուր Թովմասեան, Տիգրան Կիրակոսեան:

Եւ այսպէս, լրագրողների տասնեակից դուրս մնաց միայն ծանրորդ Գոռ Մինասեանը: Նրա տեղը տասնեակում ընդգրկուեց մարմնամարզիկ Արթուր Թովմասեանը:

Հայաստանի Հանրապետութեան «Տարվա 10 լաւագոյն մարզիկներ» 2017 թուականի մրցոյթում յաղթած մարզիկների մեծարձան երեկոյն կը կայանայ Դեկտեմբերի 27-ին՝ Մարզահամերգային համալիրում:

Հոքիի «Արարատ» Ակումբը Բարձրացել է Հորրորդ Հոքիզոնական



Երեւանի «Արարատ» հոքիի ակումբը Բելառուսի բարձրագոյն խմբի բաց առաջնութիւնում տնային երկու հանդիպում անցկացրեց Լիտուանի «Էներգիայի» հետ եւ երկուսում էլ խոշոր հաշուով յաղթանակ տարաւ՝ 13:2 եւ 14:1:

Երեսուներկու խաղից յետոյ «Արարատը» 62 միաւորով 14 թիմերի մէջ չորրորդն է:

Յաջորդ հանդիպումներն «Արարատը» կ'անցկացնի արդէն յաջորդ տարի: Յունուարի 5-ին եւ 6-ին Հայաստանի մայրաքաղաքը ներկայացնող թիմը սեփական յարկի տակ կ'ընդունի «Մետալուրգ-2»-ին:

Հենրիխ Մխիթարեանը Հի Յանկանում Լքել Անգլիայի Պրեմիեր Լիգան

«Մանչեսթեր Եունայթեդի» կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը լաւ հնարաւորութիւն ունի վերադառնալու Գերմանիա, սակայն ֆուտպոլիստը չի ցանկանում լքել Անգլիայի Պրեմիեր լիգան», - յայտարարել է գերմանացի յայտնի փորձագէտ Լի Պրայսը:

Ըստ նրա՝ հայ ֆուտպոլիստը ցանկութիւն ունի տեղափոխուել Լոնտոնի «Արսենալ» կամ «Տոտենհեմ»: Առաջին տարբերակն աւելի իրատեսական է, քանի որ «Մանչեսթեր Եունայթեդի» գլխաւոր մարզիչ ժողի Մուրինիոն վաղուց է ձգտում ձեռք բերել «գինագործների» գերմանացի կիսապաշտպան Մեսութ Օզիլին, ում լաւ ճանաչում է դեռեւս Մադրիդի «Ռեալ»-ում աշխատելիս:

Իսկ ահա ըստ Daily Star թերթի, «Մանչեսթեր Եունայթեդը» եւս մէկ տարբերակ ունի Հենրիխ Մխիթարեանին համարժէք ֆուտպոլիստով փոխարինելու համար: Ժողի Մուրինիոն հետաքրքրուած է նաեւ Լոնտոնի «Չելսիի» կիսապաշտպան Վիլիանի ծառայութիւններով: Ինչպէս նշում է լրատուամիջոցը, մանչեսթերեան ակումբը հնարաւոր է բանակցութիւններ սկսի պրագիլացի խաղացողին ձեռք բերելու համար, որի ընթացքում կարող է ներգրաւել նաեւ հայագրի ֆուտպոլիստին:

Յաւելենք, որ Հենրիխ Մխիթարեանին իր թիմում ցանկանում է տեսնել իտալական «Ինտեր» ակումբը, որն արդէն բանակցութիւններ է վարում անգլիական ակումբի հետ 28-ամեայ կիսապաշտպանին վարձակալելու համար՝ հետագայում ձեռք բերելու համար:

Բարսելոնան Չախջախեց Ռեալին



Սպանիայի առաջնութեան 17-րդ տուրում կայացաւ սուպեր-կլասիկոն՝ Ռեալ Մադրիդ-Բարսելոնան: Մադրիդում կայացած խաղում առաջատար Բարսելոնան 3-0 հաշուով ջախջախեց մրցակցին: Աչքի ընկան Սուարեսը, Մեսսին եւ Վիդալը:

Այս խաղից յետոյ Բարսելոնան 45 միաւորով առաջինն է, իսկ Ռեալը՝ 31 միաւորով 4-րդը:

«Մանչեսթեր Սիթի» Վստահ Յաղթանակը՝ 4:0



Անգլիայի առաջնութեան 19-րդ տուրում առաջատար «Մանչեսթեր Սիթին» ընդունեց «Բորնմութին»: Կատալոնացի Խոսեպ Գուարդիոլայի գլխաւորած թիմը տարաւ վստահ յաղթանակով 4:0 հաշուով: Դուբլի հեղինակ դարձաւ արժենթինացի Սերխիօ Ագուերոն:

«Մանչեսթեր Սիթին» մրցաշարային աղիւսակը գլխաւորում է 55 միաւորով եւ «Մանչեսթեր Եունայթեդի» նկատմամբ ունի 13 միաւորի առաւելութիւն:

«Մանչեսթեր Եունայթեդը» Վերջին Վայրկեանների Բաց Թողեց Յաղթանակը Մխիթարեանը Դուրս Եկաւ Փոխարինման

Անգլիայի առաջնութեան 19-րդ տուրում «Մանչեսթեր Եունայթեդը» հիւրընկալուեց «Լեսթեր Սիթիին» եւ վերջին վայրկեաններին բաց թողեց յաղթանակը՝ 2:2:

Հաշիւը 27-րդ րոպէին բացեց դաշտի տէրերի անգլիացի յարձակուող Ջեյմի Վարդին: Սակայն հիւրերը կարողացան եւ հաւասարեցնել հաշիւը, եւ առաջ անցնել:

Պորտուգալացի ժողի Մուրին-իոյի գլխաւորած թիմի կազմում դուբլի հեղինակ դարձաւ սպանացի կիսապաշտպան Խուան Մատան:

Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը «Մանչեսթեր Եունայթեդի» պահեստայինների թւում էր եւ 83-րդ րոպէին փոխարինեց Մատային:

73-րդ րոպէից 10 ֆուտպոլիստներով մնացած «Լեսթերը» աւելացուած չորրորդ րոպէին անգլիացի պաշտպան Հարի Մագրիի խփած կողի շնորհիւ խուսափեց պարտութիւնից:

Յակոբ Սերոբեան. Լաւագոյն Տարբերակը Պարու Չմեկնելն է

Մարմնամարզութեան Եւրոպական ֆեդերացիայի նոր նախագահը ատրպէյճանցի է, ինչի պատճառով այլեւս Պաքուում կայանալիք մրցաշարերին չենք կարող մասնակցել: Իսկ աշխարհի գաւաթի խաղարկութիւնների երկու փուլեր, որոնք նաեւ օլիմպիական վարկանիշներ են տալիս, կայանալու են Պաքուում: Այնպէս չէ, որ մեզ թույլ չեն տալիս կամ կարող են խոչընդոտել: Ուղղակի, եթէ յանկարծ որեւէ մէկը մեր մարզիկների վրայ տրիբունաներից շիշ նետի կամ հայհոյի, որպէս հայ չենք կարող լռել: Լաւագոյն տարբերակն ուղղակի Պաքու չմեկնելն է:

Այս մասին լրագրողների հետ հանդիպմանն ասաց սպորտային մարմնամարզութեան Հայաստանի հաւաքականի գլխաւոր մարզիչ Յակոբ Սերոբեանը, որն իր 2 սաների՝ Յարութիւն Մերդինեանի եւ Արթուր Թովմասեանի հետ ամփոփեց անցնող տարին: